

ԹՈՎՐԱ ԴԵՐԲԵՑԻ

ՎԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴԱՆՈՒԹԻՒՆԸ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Օ<sup>3</sup>Յի áó ì ³Ñ; Ô<sup>3</sup>½ñ»³Ý*

## Երկու խօսք

Շատ ժամանակ չի անցել թուվմա Գեմբացու գլխաւոր աշխատութիւնը՝ միջնադարեան հոգեւոր գրականութեան գլուխգործոցներից մէկը հանդիսացող «Նմանութիւն Յիսուս Քրիստոսի» հատորը մեր կայքում հրատարակելուց, եւ ահա սրտի մեծ գոհունակութեամբ այստեղ ներկայացնում ենք նոյն հեղինակի այս միւս գործը, որը ծաւալով թէեւ զիջում է առաջինին, բայց կարծես նրա շարունակութիւնն է հանդիսանում եւ եզրահանգումը:

Հարկաւոր չենք նկատում, ուստի, կանգ առնել հեղինակի լեզուական ոճի ու գաղափարների քննարկման վրայ, քանի որ դա կատարել ենք «Նմանութիւն Յիսուս Քրիստոսի» հատորի նախաբանում: Եւ այն՝ ինչ ասուել է այնտեղ, ի գօրու է նաեւ այս էջերի համար:

Այս տողերում պարունակուած պատգամը լաւ հասկանալու համար հարկաւոր է ընթերցել սրանք նմանութեան գրքի ամբողջութեան հետ համեմատելով: Իրօք, այս խիտ ու սակաւաթիւ գլուխներում հեղինակը չի բացատրել կամ բացայայտել իր միտքը ծաւալուն կերպով, այլ շարագրել է էականը, որը ճիշտ հասկացուելու համար կարիքն ունի բացատրուելու:

Նախեւառաջ հարկաւոր է յիշել, որ գրութիւնը գրուել է վանականների համար եւ քննարկում է վանականութեանը վերաբերող հարցեր: Ընդհանուր առմամբ, սակայն, կարող է օգտակար խորհրդածութեան նիւթ հանդիսանալ որեւէ քրիստոնեայի համար, առանց ժխտողական դիրքորոշում գրաւելու նրա խիտ արմատականութեան դիմաց: Առաջին հայեացքից կարող է թուալ՝ թէ հեղինակն յօժարութեամբ տրուում է չափազանցութիւններին, բայց դա միայն երեւութական է: Գրութեան ամբողջութիւնը հարկաւոր է կարդալ իններորդ գլխի լոյսի ներքոյ, ուր խօսուում է միջին ճանապարհի մասին:

«Ո՛չ թէ կերակուրի փափաքն է դատապարտում Աստուած, այլ կերակուրի համեստութեան պատճառով իր դէմ արտասանուած տրտունջները», գրում է Սուրբ Օգոստինոսն իր Խոստովանութիւնների գրքում: Ծիծաղը տհաճ չէ Աստծուն, բայց նաեւ ընդունելի չէ ծիսակատարութիւնների ժամանակ: Ընկերային խօսակցութիւնները մեզ Աստծուց չեն հեռացնում, բայց դատարկ շատախօսութիւնը կորստեան է մատնում մեր ժամանակը եւ մեր ժամանակի հետ միասին՝ մեզ նոյնպէս: Երեւակայութիւնն Աստուած ինքն է պարգեւել մեզ, բայց որպէսզի նրա միջոցով ծրագրուածը գործի վերածենք, եւ ո՛չ թէ միայն երագելով բաւարարուենք: Մարդիկ, նաեւ կանայք, սատանաներ չեն, եւ նրանց տեսները կամ նրանց հետ շփուելը խոսափելի իրականութիւններ չեն, բայց նրանց պատճառով Աստծուն մոռանալը եւ ատելը խոցի միայնութիւնն ու լռութիւնը, աշխատանքը ... սա սէր չի կարող կոչուել, այլ՝ դատարկապորտութիւն:

«Աստուած քեզնից չի պահանջում կործանել մարմինդ, այլ՝ սանձահարել կրքերդ» (գլուխ Թ.): Ահա սա՛ է ամբողջ գրքի խօսքը. լրջութիւն, մեծարանք, պաշտամունք՝ Աստծուն վերաբերող իրողութիւններում, պարկեշտութիւն, պարզութիւն ու ճշմարտութիւն՝ ամէն ինչում:



Աստծոյ մեծագոյն շնորհներէն մէկն է Աստուածաշնչի գիտութիւնը: Բայց թուում է, թէ նախընտրելի է Միաբանութեան կանոնների պահպանումը: Այս իսկ պատճառով, Յիսուս, մեր գերագոյն Ուսուցիչը, իր աշակերտներին աւանդելով կեանքի ու կանոնապահութեան օրէնքը, յաւելում է. «Այժմ այս ամէնն իմացաք. արդ երանելի կը լինէք, եթէ գործադրէք սրանք»<sup>4</sup>: Մարգն, հետեւաբար, Աստծոյ զնահատմամբ այնքան աւելի բախտաւոր է՝ որքան աւելի ջերմ է իրենում կանոնապահութեան եռանդը:

Կանոնական որեւէ օրէնսդրութիւն որպէս նպատակ ունի երկու բարիք. որ ջանասիրութեամբ գործադրուեն Սահմանադրութեան հրահանգները եւ որ անհոգներն ուղղման ենթարկուեն իրենց յանցանքներին համապատասխան խստութեամբ: Առաքիւնի ու աստուածասէր կրօնաւորի բնորոշ յատկութիւնն է չարամէտ բնութեան սանձահարումը, յօժար հնազանդութիւնը կանոններին եւ անպատեհ մղումների մահացուցումը: Ով, իրօք, սիրում է կանոնապահութիւնը, իմաստուն է եւ կը ճոխանայ բազում առաքիւնութիւններով: Մինչ ով ասում է յանդիմանութիւնն ու վարքի սրբագրումը, յիմար է ու պատուազուրկ:

Քննիր կանոնապահ կրօնաւորի վարուելակերպը. թեթեւ չէ իր խօսքերում, չի դատում ըստ այս կամ այն տեսակէտի, այլ ընթանում է Աստծոյ երկիրդի մէջ եւ իր պարտականութիւնները կատարում է ջանասիրութեամբ, պահպանելով լուծութիւնը եւ սիրելով խոցի անդորրը: Չի դժգոհում, չի չարախօսում, այլ Աստծուն է յանձնում ամէն բան, Աստծուն ունի միշտ իր աչքերի առաջ եւ չի զբաղում իրեն չվերաբերուող գործերով, առաւել մեծ ազատութեամբ իր գործերը կատարել կարողանալու համար: Քանի որ անչափօրէն անմիտ է նա՝ ով անհոգութեան է մատնում իրեն յանձնուած գործը եւ խառնում է այլոց գործերին:

Պահպանիր, ուրեմն, կանոններդ ամէն ինչում, եւ կ'ունենաս մեծ խաղաղութիւն եւ փառք: Զանա խոսափել այն ամէնից՝ ինչ անվայել է: Արա այն՝ ինչ հաճոյ է Աստծուն, եւ Միաբանութեանդ կանոնների պահպանման գործում մի՛ թերացիր ինչ որ մի աշխարհականի հաճոյք պատճառելու համար, ով էլ որ նա լինի: Անմիտ է նա՝ ով գործում է խղճի ձայնին հակառակ, եւ ով Աստծուն վշտացնում է՝ մարդկանց հաճելի լինելու համար: Ով, յիբաւի, չի կատարում իր պարտականութիւնները, անարգում է Աստծուն, ոտնակոխ անելով Նրա կամքը:

Եթէ տեսնում ես, որ ինչ որ մէկը վարւում է անհոգութեամբ, յանդիմանիր նրան եղբայրաբար եւ քաջալերիր ուղղուելու, բայց երբեք մի՛ հետեւիր իր սխալին եւ կեղծ եղբայրսիրութիւնից խաբուելով՝ համաձայնութիւնդ մի՛ տուր իր չարիքին, որպէսզի քեզ չենթարկես իր հետ ընկնելու եւ կորստեան մատնուելու վտանգին: Ով նախանձախնդիր է իր Միաբանութեան կանոնների պահպանմանը եւ յօժարութեամբ ու սիրով է ընդունում սրբագրումները, Աստուծոյ յատուկ շնորհներ կը ստանայ եւ իր մահուան օրը դատապարտուելու վախը չի ունենայ, այլ ընդհակառակն՝ ընտրեալների հետ կը ցնծայ իր աշխատանքի վարձատրութեան համար, Յիսուսի խօսքերի համաձայն. «Շատ լաւ, բարի ու հաւատարիմ ծառայ, քանի որ հաւատարիմ գտնուեցիր քչում, ահա քեզ իշխանութիւն եմ տալիս շատի վրայ: Մտիր Տիրոջդ ուրախութեան մէջ»<sup>5</sup>:

Ով ծոյլ է ու անհոգ, վշտացնում է Աստծուն եւ մարդկանց, եւ առաւել վատթար է՝ քան իր անկողնում գամուած անդամալոյծը: Իրօք, այս վերջիները տառապում են բնական հիւանդութիւնից, մինչ առաջիները յաղթում են սրտի վատութիւնից: Առաւել մեծ առաքիւնութիւն է սեփական կրքերին տիրապետելը, քան սատանաներին փախուստի մատնելը: Եւ առաւել մեծ եղբայրսիրութիւն է անհոգին յանդիմանելը, քան աղքատներին ողորմութիւն տալը: Ի՞նչ եռանդ կարող է գոյութիւն ունենալ նրանում՝ ով ձանձրանում է աղօթքներից եւ սիրում է շողակրատ շատախօսութիւնները: Բացարձակապէս անհնարին է եռանդի ներկայութիւնն այդպիսիներում, որովհետեւ եթէ եռանդի մի չնչին բոց անգամ ունենալին իրենց սրտում, կը խոսափէին, դրսում, անօգուտ զրոյցներից:

<sup>4</sup> Յվհ 13, 17

<sup>5</sup> Մտթ 25, 23

Արդեօք ինչպէ՞ս կարող է կրօնաւորը հասնել հոգու եռանդով լցուելուն: Յաճախ բռնութիւն գործադրելով իր բնական չար սովորոյթների վրայ եւ պահպանելով իր Միաբանութեան կանոններն այնպէս՝ ինչպէս իրեն ականդուել է հոգեւէրների կողմից:

Իրենց միջակութեամբ բաւարարողները շարունակ տրտնջում են կանոնների ծանրութիւնից, մինչ եռանդուն հոգիներն ուրախութեամբ փարուում են կանոնապահութեանը: Թերեւս որպէս պատճառ ես բերում սա. «Վախենում եմ առողջութեանս վնասելուց եւ չափազանց տկարանալուց»: Այս ինչէ՞ր ես ասում, դաղջ ու թուլամորթ հոգի: Իսկապէս, չես հասկանում այն՝ ինչ ասում ես: Վախենում ես փոքրից, բայց չե՞ս սարսափում մեծից: Խուսափում ես մարմնի յոգնութիւններից, եւ չե՞ս նեղուում մրտուած խղճիդ խայթերից: Քո համար ծանր են պահքերը, հսկումներն ու լուրթիւնը, բայց չե՞ս դողում դժոխքում այրուելու, սատանաներից չարչրկուելու եւ Աստուծոյ Արքայութիւնից դուրս նետուելու հեռանկարի առաջ: Ունայն են վախերդ: Մեծագոյն ունայնութիւն է մարմնի մանրիկ զրկանքների մասին յաճախ մտածելը, միայն ներկայ չարիքներն ուշադրութեան կենտրոնում ունենալը, անհոգութեան մատնելով այն իրողութիւնները, որոնք փրկում կամ դատապարտում են յաւիտեան:

Ներանձնացիր, վերադարձիր առ Աստուած, որ ստեղծեց քեզ, Իրեն ապաւինիր եւ Նա կ'օգնի քեզ: Եթէ չես կարող ծառայել Նրան առողջ վիճակում, ծառայիր հիւանդութեանդ մէջ, եւ Երկնքում, Սուրբ Մարտիրոսների հետ, կը պսակի քեզ զեղատեսիլ վարդերով ու շուշաններով, որովհետեւ Իր սիրոյ համար երկրի վրայ համբերեցիր ցաւերին ու նեղութեանը:

Հետեւաբար, ինքդ քեզ մի՛ արտօնիր կանոնազանցութիւններ կատարելու՝ այս մահկանացու կեանքին կապուած լինելուդ պատճառով, աշխարհային միխթարութիւններ մի՛ փնտռիր, հեռացիր անօգուտ խօսակցութիւններից, նուիրուիր սրբազան ուսումների, պահիր կանոնները, սանձահարիր մարմինդ, փարուիր հնազանդութեանը եւ կը փրկես հոգիդ, Յիսուսի խօսքի համաձայն. «Ով այս աշխարհում ատում է իր անձը, այն պահում է յաւիտեանական կեանքի համար»<sup>6</sup>: Մտերիմ մի՛ եղիր կանոնազանցին, մի՛ հետեւիր նրա թեթեւութիւններին, մի՛ նմանուիր նրան՝ խարխլելով Միաբանութեանդ հիմքերը: Ընկերութիւն մշակիր բարի սովորոյթների տէր եւ իսկապէս աստուածավախ կրօնաւորի հետ, որպէսզի նրա կողմից կրթուես բարու մէջ:

Ոչ ոք թող չարագրացնի իրեն՝ պատճառ բերելով մի ուրիշին, այլ ակելի՛ թող որ մտածի իր փրկութեան մասին, պտղաբեր դարձնելով իրեն տրուած ժամանակը, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «Քանի դեռ ժամանակ ունենք, բոլորի հանդէպ բարիք գործենք»<sup>7</sup>: Բոլորին բարեգործում է նա՝ ով ջանասիրութեամբ պահպանում է իր կանոնները. այդպիսին վանքում օրինակ է բոլորի համար:

Երանելի է այն կրօնաւորը, որը ջանում է յաղթել իր սրտի չար մղումներին ամէն ինչում, որովհետեւ առատօրէն վարձատրուելու է այն ամէնի համար, որ կրում է ի սէր Քրիստոսի: Հոգեւոր կանոնապահութեան եռանդը վառ պահելու համար Պօղոս Առաքեալն իր աշակերտներին յորդորում է, ասելով. «Այսուհետեւ, եղբայրներ, ինչը որ ճշմարտութեամբ է, պարկեշտութեամբ, արդարութեամբ, սրբութեամբ, սիրով, բարութեամբ, առաքինութեամբ, գովութեամբ, ա՛յն խորհեցէք: Եւ ինչ որ սովորեցիք ու ընդունեցիք, լսեցիք ու տեսաք ինձնից, ա՛յն գործադրեցէք»<sup>8</sup>: Տեսնո՞ւմ էք, թէ որքա՛ն ժիր ու հետամուտ էր Պօղոս Առաքեալը կանոնների պահպանմանը, եւ թէ քանի՛ցս փութկոտ էր՝ իր յաջորդներին բարի օրինակ տալու գործում: Եւ իրօք, ով սիրում է կանոնապահութիւնն իրենում եւ այլոց մէջ, մեծամեծ արժանիքներ է շահում Երկնքի համար:

<sup>6</sup> Յվհ 12, 25

<sup>7</sup> Գղտ 6, 10

<sup>8</sup> Փլպ 4, 8-9

ՄԱՏԱՆԱԵՐ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Սատանան միշտ եւ ամէնուր աշխատում է խաբել բարի ու աստուածասէր հոգիներին, բայց յատկապէս ջանում է իր որոգայթներում որսալ կրօնաւորներին, որոնք Միաբանութեան մէջ են հաւաքուել եւ ապրում են ըստ կանոնների: Այս պատճառով է Սուրբ Եկեղեցու առաջին Քահանայապետը՝ Պետրոս Առաքեալը հաւատացեալներին զգուշացնում, ասելով. «Արթուն եղէք, հսկեցէք, որովհետեւ ձեր ոտիսը՝ սատանան մոռնում է առիւծի նման, շրջում է ու փնտռում, թէ ում կլանի: Դիմադրէք նրան, հաստատուն մնալով հաւատքի մէջ»<sup>9</sup>: Յովհաննէս Առաքեալը նոյնպէս Յայտնութեան գրքում գոչում է. «Վա՛յ ձեզ, երկիր եւ ծով, որովհետեւ ձեր մօտ ընկաւ սատանան մեծ ցասամբ»<sup>10</sup>:

Սատանան, իրօք, Աստուծոյ ծառաներին փորձում է առաւել սաստկութեամբ, նսեմացնելու համար կրօնաւորական վիճակի վեհութիւնը, եւ վանականների հանդէպ առաւել յաճախ է պատերազմի ելնում, քան աշխարհականների, որովհետեւ նախանձում է աստուածավախների սրբութեանը, որոնք զգաստ եւ ժուժկալ են ապրում: Որովհետեւ գիտէ, որ երկնքում առաւել փառքով են պսակուելու նրանք՝ ովքեր առաւել սրբութեամբ են ապրում երկրի վրայ: Այս իսկ պատճառով, որքան աւելի բուռն են փորձութիւնները, այնքան աւելի պատուաւոր կը լինեն նրանք Աստուծոյ առաջ, եթէ քաջութեամբ դիմադրեն եւ յաղթեն կրքերին ու մոլութիւններին, որոնք գործիքներ են սատանայի ձեռքում, որովհետեւ այդպիսով պայքարած կը լինեն արժէքաւոր կերպով:

Այն օրից ի վեր, ինչ իր հպարտութեան պատճառով դուրս վռնդուեց երկնային Արքայութիւնից, սատանան երբեք չի դադարել ամբողջ երկրով մէկ պտտուելուց, փնտռելով որեւէ մէկին, իր չար ցանկութիւններով խաբելու, հաճոյական վայելքներով խոցելու, Աստուծոյ շնորհը կորցնել տալու եւ, վերջում, իր հետ դէպի յաւիտենական դատապարտութիւն քարշ տալու համար: Եւ ինչպէս որ առաջին մարդուն փորձեց երկրային դրախտում, եւ իսրայէլացիներին՝ անապատում, նոյնպէս այժմ փորձում ու հետապնդում է կրօնաւորներին վանքերում, միջակ սրբութեամբ եւ կանոնազանցութեամբ ապրել ստիպելու, Եկեղեցու դէմ ապստամբել տալու եւ անհնազանդ դարձնելու համար: Այսպէս է վարում նրանց երկնային փառքից զրկելու եւ դատաստանի օրը նրանց դէմ ամբաստանութեան նիւթ ունենալու համար:

Ուստի հարկաւոր է շարունակ հսկել եւ զգոյշ լինել ամէնուր, որպէսզի սատանան Աստուծոյ ծառաներին չգտնի անհոգ ու անզէն, նա՛ որ քուն չի մտնում եւ չի յոգնում երբեք, այլ անդադար վազվզում է աջ ու ձախ: Իր համար դիւրին է անակնկալի բերելով յաղթելը ծոյրերին, այսինքն նրանց՝ ովքեր քիչ են աշխատում, բայց ցանկանում են լաւ ուտել: Եւ առանց յապաղելու խոցում է անզէններին, այսինքն նրանց՝ ովքեր հազուադէպ են աղօթում եւ յաճախ են գանց առնում հոգեւոր ընթերցումները, կամ էլ՝ այդ ընթերցումները չեն դրոշմում իրենց սրտում: Յրուածներին ապականում է հրապուրիչ երեւակայութիւններով, հէքեաթներով եւ ունայն երազանքներով շղթայում է պարապորդներին, որպէսզի անհոգութեան մատնեն իրենց պարտականութիւնները եւ խանգարեն այլոց: Սկսուած բարեգործութիւնից հեռացնում է նրանց՝ ովքեր մտադիր էին բարեգործելու. թմրեցնում է նրանց՝ ովքեր փափաքում էին աղօթել կամ ընթերցել. անկողնում է պահում նրանց՝ ովքեր կամենում են ոտքի ելնել:

Վանքում մի որեւէ անկիւն չկայ, ուր սատանան, կրօնաւորների թշնամին, չայցելի՝ յափշտակելու եւ կորստեան մատնելու համար Քրիստոսի հօտի գառներից գոնէ մէկին: Ահա այս պատճառով է երկնային Հովիւրը բարձր ձայնով հնչեցնում փրկութեան շեփորը, զգուշացնելով իր ոչխարներին. «Արթուն եղէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ

<sup>9</sup> 1 Պտ 5, 8-9

<sup>10</sup> Յյտ 12, 12

չընկնէք»<sup>11</sup>, կարծես թէ ասել կամենալով. «Յափշտակող գայլը պտտուում է ձեր տան շուրջը շուրջը: Հինաւուրց օձը ճեղքուածքներ է փնտռում, ձեր սրտերից ներս մտնելու, գայլոյ թի թոյնով խայթելու կամ էլ ծուլութեան շոյանքներով գգուելու համար»:

Զգոյշ եղէք, ուրեմն, եւ օր ու գիշեր աղօթեցէք սրտով ու խօսքով, որովհետեւ ամէն կողմից սպառնում են ձեզ պատերազմներ եւ երկրի վրայ ոչինչ ապահով չէ: Ըսկատամարտի պատրաստ բազմաթիւ թշնամիներ ձեր ճանապարհին լարում են վարմեր ու որոգայթներ, որպէսզի ուղղաշաւիղ արահետից սայթաքէք եւ հեռանաք ձեր սուրբ նպատակներից: Բայց դուք պինդ կացէք եւ քաջութեամբ պատերազմեցէք ձեր հոգիների համար: Տէրը մեզ հետ է: Զգուշութեամբ քննեցէք՝ թէ ի՛նչ պատկերներ են ներկայանում ձեր երեւակայութեանը. աշխարհային կամ մարմնական: Ամուր փակեցէք ձեր սրտի դռները եւ խաչի նշանով գինուեցէք, որպէսզի սատանան ներս չմտնի, որ գալիս է փորձութեան մատնելու եւ մեղքի մէջ զցելու, այնպէս՝ որ վշտացնէք Աստծուն եւ կորցնէք Նրա շնորհը:

Ո՛վ կրօնաւորներ, զգուշացէք սատանայի խարդախութիւններից ու մահաշունչ ներշնչումներից, մի՛ խօսակցէք նրանց հետ, այլ հազիւ թէ կը զգաք անվայել մի խլրտում, հեռացրէք ձեր ուշադրութիւնը եւ օգնութեան կանչէք Տէր Յիսուսի Անունը, տհաճութիւն զգալով ձեր երեւակայութեանը ներկայացած պատկերների համար: Մտածեցէք Աստծոյ եւ հոգեւոր նիւթերի մասին, վարժուեցէք ձեր մեղքերը լալու սուրբ եւ կենսատու առաքինութեանը: Եթէ այսպէս վարուէք, սատանան իսկոյն կը փախչի ամօթահար եւ ձեզ կը մօտենան ձեր միտքարութեան համար առաքուած սուրբ հրեշտակները, որոնք կը զօրացնեն ձեր բազուկներն ընդդէմ սատանայական պատերազմների:

Յարատեւեցէք, ուրեմն, Աստծոյ երկիւղում, հոգով միշտ արթուն եղէք, այնպէս՝ որ փորձութիւնը սկզբից եւեթ բացայայտէք եւ սրտի հեծեծանքներով՝ խոնարհ էութեամբ աղօթէք:

Մեծաբանութիւններ մի՛ խորհէք եւ ո՛չ էլ գովասանքներ ձեր անձերի մասին, այլ աւելի՛ ձեզ որպէս իրօք դիւրաբեկ մարդիկ եւ անօգուտ ծառաներ խոստովանեցէք: Այն ամբողջ բարին, որ ճանաչում էք կամ գործադրում, անմնացորդ կերպով վերագրեցէք ո՛չ թէ ձեր մտքին կամ աշխատանքին, այլ աստուածային շնորհին ու ողորմութեանը:

Սատանան ոչ ոքից այնքան չի սարսափում ու փախչում, որքան խոնարհից եւ նրանից՝ ով արհամարհում է իր անձը: Եւ ընդհակառակն, ոչ ոքի վրայ այնքան իշխանութիւն չունի, որքան հպարտի ու յաւակնոտի: Հետեւաբար, հեռու մնա հպարտութիւնից, եթէ չես կամենում կործանուել: Եթէ չես ուզում խաբուել ու սայթաքել, մի՛ գոռոզացիր եւ կամքիդ համաձայնութիւնը մի՛ տուր ինքնահաւան մտքերին:

Վանքը որքան էլ որ մենութեան մէջ լինի, տակաւին ազատ չես լինի փորձութիւններից, որովհետեւ սատանան Յիսուսին անապատում փորձեց, Նրան՝ որ լի էր Սուրբ Հոգիով:

Հետեւաբար, քանի դեռ ապրում ես երկրի վրայ, պէտք է պայքարես սատանայի սադրանքների եւ մարմնիդ ցանկութիւնների դէմ: Իսկ եթէ երբեմն սատանան թողնում է քեզ խաղաղութեան մէջ, դա անում է խաբելու նպատակով, որպէսզի անակնկալ յանկարծակի կերպով վրադ յարձակուի եւ քեզ պարտութեան մատնի, մինչ քեզ անպաշտպան ու տկարացած կը գտնի:

Քեզ փորձութիւնների է ենթարկում եկեղեցիում, որպէսզի ժամերգութիւններից ձանձրանաս եւ կամ սաղմոսես առանց խօսքերի իմաստի վրայ կենտրոնանալու: Երեւակայութեանդ մէջ վերակոչում է ու վերարթնացնում յիշատակն արտաքին իրողութիւնների, որոնք նախապէս տեսել ես կամ լսել, որպէսզի քեզ զրկի աղօթքի պտուղներից եւ քո համար ծանր ու յոգնեցուցիչ դարձնի Տիրոջ գովքը:

Քեզ փորձութիւնների է ենթարկում սեղանատանը, որպէսզի ուտես առանց չափի զգացման, որպէսզի համադամ խորտիկներ փնտռես եւ դժգոհես ու տրտնջաս կերակուրների կա՛մ համեստութեան, կա՛մ սակաւութեան, կա՛մ լաւ պատրաստուած չլինելու, եւ կա՛մ էլ քո ճաշակին չհամապատասխանելու համար:

<sup>11</sup> Մրկ 14, 38

Քեզ փորձութիւնների է ենթարկում խուցիղ ներսում, որպէսզի չկամութեամբ աշխատես, հազուադէպ աղօթես, քիչ կարդաս, եւ շուտով ու խանդավառութեամբ այնտեղից դուրս փախչես՝ դատարկ գրոյցների բռնուելու եւ ուշ վերադառնալու համար:

Քեզ փորձութիւնների է ենթարկում օրուայ ընթացքում, որպէսզի առանց չափի զգացման խօսես, իսկ եթէ հանգստի պահն է, իսկոյն մղում է քեզ խօսելու ունայն անօգուտ իրողութիւնների մասին, որպէսզի բժաւորես խիղճդ եւ երբեմն էլ վիրաւորես եղբայրակցիդ սիրտը:

Այս իսկ պատճառով, արթուն եղիր եւ շարունակ աղերսիր Աստծուն, որպէսզի քեզ շնորհ տայ՝ ընդդէմ սատանայական հնարքների, որովհետեւ թշնամին ծուղակներ է պատրաստում Քրիստոսի Սիրոյն նուիրուած անձանց համար ինչպէս նեղութիւնների՝ այնպէս էլ բարօրութեան մէջ:

## Գլուխ Գ.

### ԹԷ ԻՆՉՈՒՄ Է ԱՅՋԱՆՈՒՄ ԱՐԴՈՒ ԻՐԱԿԱՆ ՊԱՐՁԱՆ ԱՍՏՈՒԱԾ, ՈՐՈՒ ԳԵՐԱԳՈՅՆ ԲԱՐԻՔԻՆ Է

Թուով շա՛տ ու շա՛տ են մեր շեղումներն Աստծուց, գերագոյն Բարիքից, որովհետեւ մեր ապականուած եւ տկար լինելու պատճառով հեշտօրէն ենք սահում ընկնում ստորին ու աշխարհային ցանկութիւնների մէջ, որոնք չեն կարող յազեցնել մեզ եւ ո՛չ էլ՝ մեր հետ մնալ յարատեւ: Այս իսկ պատճառով, հարկաւոր է շարունակական վերադարձն առ Աստուած, որից յաճախ ենք հեռանում փակուելով ինքներս մեզնում, լցուելով եսասիրութեամբ, փնտռելով ինչ ինչ արարածներ՝ նրանց հետ չար կապեր հաստատելու համար, եւ կամ էլ մտահոգուելով աւելի ժամանակաւոր՝ քան աստուածային իրողութիւններով:

Յաճախ մինչեւ իսկ մեծ հակադրանք ենք զգում փրկարար իրողութիւնների նկատմամբ, որոնք նպաստում են կանոնապահութեանը, եւ ցանկանում ենք այն՝ ինչ յարմարաւէտ է ու հաճելի, առանց խղճի ձայնին կարեւորութիւն տալու եւ առանց գէթ մի պահ մտածելու՝ թէ որքա՛ն տհաճ է Աստծուն, որ Իրենից հեռանում ենք այդպիսի ունայն ու վաղանցուկ իրողութիւնների համար: Եւ եթէ նոյնիսկ գիտակից ենք, որ այսինչ անձն արդար է ու սրբակենցաղ, եթէ նա հակառակում է մեզ եւ որոշակի սեղմումներ առաջարկում ի շահ առաքինութեան, իսկոյն սկսում ենք ընդդիմանալ նրա կարծիքին եւ ցածր համարում ունենալ իր անձի նկատմամբ, եւ խորհում ենք՝ թէ հարկաւոր չէ լրջօրէն ընդունել այդ խորհուրդները:

Այս սխալը մեծ մասամբ հանդիպում է այն կրօնաւորների մօտ, որոնք ցանկանում են իրենց քմահաճոյքին հետեւել ընդդէմ Աստծոյ կամքի եւ մեծաւորների կարգադրութեան, մոռանալով ծանր դատաստանը, որ սպասում է իրենց, եթէ շարունակեն վստահել իրենք իրենց եւ իրենց ուժերին աւելի՝ քան պատշաճ է:

Այս ամէնը ծնւում է հպարտութիւնից եւ սատանայի փորձութիւններից, որը ջանում է մարմնի փափկասիրութեամբ հրապուրել նրանց՝ ովքեր պայքարում են հոգեւոր ասպարէզում յառաջադիմելու համար: Մարդու իրական դարձի համար բաւական չէ, ուրեմն, աշխարհային զգեստը փոխելը, ինչը որ կարող է կատարուել մի օրում եւ մի ժամում: Իրական կրօնական դարձը կատարւում է, երբ մէկն հերոսաբար աշխատում է յաղթել իր թերութիւններին եւ մեծ եռանդով նուիրւում է առաքինութիւնների ձեռքբերմանը:

Մենք, որ վանական հանդերձներ ենք կրում, պարտաւոր ենք, հետեւաբար, որքան որ հնարաւոր է անջատել մեր սրտերը նիւթական տեսանելի իրողութիւններից, բարձրանալ մեր Արարչի անտեսանելի Դէմքի հայեցողութեանը, եւ կարօտով փափաքել երկնային իրողութիւնները: Եւ օր ու գիշեր, ամէն անգամ՝ որ մտքի թափառումներ ենք ունենում ցանկասէր երեւակայութիւնների մէջ, պարտաւոր ենք խոնարհաբար ներում

Հայցել եւ Մարգարէի հետ հառաչել. «Գթառատ եղիր մեր հանդէպ, Աստուած, Փրկիչ մեր, եւ բարկութեանդ համաձայն մի՛ վարուիր մեր հետ»<sup>12</sup>:

Երբ այսպէս ենք վարուում, Աստուած յօժարութեամբ ընդունում է մեր աղօթքները եւ երկնային հրեշտակներն ուրախանում են, որովհետեւ ամբողջ սրտով վերադառնում ենք Աստծուն, մեր Տիրոջը, որը բոլոր Սրբերի երանութիւնն է:

Սատանան, ընդհակառակն, աշխատում է հեռացնել մեզ գերագոյն Բարիքից, իր նպատակների իրականացմանը ծառայեցնելով զանազան իրավիճակներ ու փորձութիւններ: Մեզնում արթնացնում է մտածումներ հպարտութեան, գայրոյթի, շատակերութեան, մարմնի ցանկասիրութեան, նախանձի, վիճաբանութեան, յամառութեան ու կարծրասրտութեան, ստախօսութեան, հայհոյութեան, անվստահութեան, յուսահատութեան, վատասրտութեան ու անյարատեւութեան, ճանճրոյթի ու ծուլութեան, եւ ուրիշ շատ չար մտածումներ, որոնք մէկիկ մէկիկ թուարկելը չափազանց երկար կը լինի: Այդպիսով կամենում է մեզ հեռացնել հոգեւոր իրողութիւնների քաղցրութիւնից ու հրեշտակային մաքրութիւնից եւ երկար ժամանակով պահել ստորին ունայն իրողութիւնների մէջ, որպէսզի կրքերին յաղթելու մեծագոյն դժուարութիւնը տեսնելով դադարենք Աստծուն փնտռել: Այդպիսի վիճակի հասնելով, թոյլ հոգիները, առաքինութիւններից կարծես յոգնելով, մի կողմ են թողնում հոգեւոր յառաջադիմութիւնը եւ սրտի պահպանումի ջանքերը:

Ահա սրանք են թշնամու գործերը, որն անվերադարձ կերպով վռնդուած է Աստծոյ ներկայութիւնից, Երկնքից: Աստծուց մէկընդմիջտ բաժանուած, նա չի դադարում ամէն տեսակի չարիք նիւթել ընդդէմ նրանց՝ ովքեր գործում են բարին, յատկապէս երբ կամենում են աղօթել, ներանձնանալ լուութեան մէջ եւ աստուածային ներումը հայցել իրենց մեղքերի համար: Իր ամբողջ էութեամբ չար լինելով, ահաւոր մոլեգնութեամբ դարանակալում է բոլոր բարիներին: Յանցեր է հիւսում ամբողջ աշխարհով մէկ եւ դրանք նետում է ամէն կողմ: Փորձութիւնների է ենթարկում կրօնաւորներին ու կրօնաւորութիւններին, մեծաւորներին ու ենթականերին, միշտ տենչալով մարմնասիրութեան կեռով որսալու գէթ միայն մի ձուկ, վանքի վճիտ աւազանից փոխադրելու համար նրան աշխարհի ծովափ, ուր կը կարողանայ ամբողջովին նուաճել նրան չարիքի միւս բոլոր գործիքների միջոցով. տեսողութեան, լսողութեան եւ խենթ ու խելառ, ունայն զուարճութիւնների մի բազմութեան:

Ահա այս իսկ պատճառով, կրօնաւորը, Աստծոյ ծառան, պէտք է հաւատարմօրէն ընթանայ փրկութեան ուղիով եւ ճնշի ցնորքներն ինչպէս մտքի՝ այնպէս էլ երեւակայութեան, չկորցնելու համար գերագոյն Բարիքը, որն անհնարին է ունենալ ունայնութիւնների հետ միասին: Այն ամէն անգամ, որ կրօնաւորն իրեն զգում է թշնամու կողմից խաբուած կամ խոչընդոտուած, պարտաւոր է վերադառնալ առ Աստուած աղօթքով ու զղջմամբ, կրկնելով Սուրբ Դաւթի հետ. «Աչքերս միշտ ուղղուած են առ Աստուած, որովհետեւ նա որոգայթներից ազատում է իմ ոտքերը»<sup>13</sup>:

Եւ իրօք, ինչպէս որ մեղանչելով եւ ստեղծուած իրողութիւններն անկանոն կերպով վայելելով մարդիկ ստրկանում են սատանային, այնպէս էլ զղջմամբ առ Աստուած վերադառնալով կրկին ստանում են ազատութիւնը: Մեղանչելով անձն ապականւում է, սառում ու չորանում: Զղջալով, աղօթելով, իր յանցանքները ողբալով, ապաշխարելով եւ ուղղուելով մաքրւում է, բոցավառում եւ ստանում աստուածային շնորհի ցօղը: Եւ յաճախ, խորհրդածելով այն հեշտութեան մասին, որով ընկել է, ուսանում է խոնարհութիւնը, առաջադրում է այդուհետեւ առաւել զգոյշ լինել եւ առաւել մեծ եռանդով դիմադրել փորձութիւններին:

Իսկապէս դարձի է եկել եւ կրօնաւորի անունն ու զգեստը ի զուր չի կրում նա՝ ով մեռնում է աշխարհին եւ սիրով ապրում է միմիայն Յիսուսի համար. նա՝ ով որպէս իր վերջին նպատակ, առ Աստուած է ուղղում իր բոլոր գործերն ու մտածումները. նա՝ ով իր բոլոր խօսքերում ու գործերում փնտռում ու փափաքում է միմիայն Աստծոյ փառքը եւ

<sup>12</sup> Սղմ 84, 6

<sup>13</sup> Սղմ 24, 15

Նրա Սուրբ Անուան գովքը. նա՝ ով Երկնքում եւ երկրի վրայ գոյութիւն ունեցող բոլոր բարիքների հետ նուիրում է Աստծուն եւ բարձրանում առ Նա, անդադար երախտագիտութիւն յայտնելով Տիրոջը, գերագոյն Բարիքին, որից են բխում արարուած բոլոր բարիքները:

## Գլուխ Դ.

### ԽՈՒՍՈՐԸ ԿՐՕՆԱԼՈՐԻ ՀԱՅՁԱՆՂՈՒԹԻԱՆ

Բարի կրօնաւորը պէտք է զուարթութեամբ փարուի յանուն Հնազանդութեան տրուած հրամաններին եւ ոչինչ չպէտք է պահպանի իր կամքից, այլ ընդհակառակն, Յիսուսի օրինակին հետեւելով, պէտք է մեծ յօժարութեամբ յանձնուի Աստծոյ ձեռքերին ու իր մեծաւորներին, որովհետեւ սա է այն ամենահաճոյ գոհը, որն երբեւէ կարող է մատուցել Աստծուն:

Իւրաքանչիւր բարի կրօնաւոր, հետեւաբար, պէտք է զգոյշ լինի իր մեծաւորին յանդգնօրէն դատելուց եւ նրա վարուելակերպը չափազանց քննելուց: Պէտք է, ընդհակառակն, բարի մեկնաբանութիւն տայ նրա խօսքերին ու գործերին: Իսկ եթէ մեծաւորի անձում ներկայ են լինում նուազ օգտակար համոզումներ, կամ նոյնիսկ իրական թերութիւններ, չպէտք է արհամարհի նրան ու յանդիմանի, այլ ների ու համբերութեամբ կրի, եւ եթէ հարկաւոր է՝ նրան իր կարծիքը յայտնի սիրով, անձամբ կամ մի ա՛յլ առաւել յարմար անձի միջոցով, որովհետեւ խեղճն իր ուսերին ծանր բեռներ է կրում: Ինչպէս նաեւ պէտք է ծածուկ աղօթի նրա համար, որպէսզի Աստուած պահպանի նրան ու մխիթարի, քանի որ վանքում չկայ ուրիշ ոչ ոք, որն ամէն օր աւելի հոգս ունենայ՝ քան մեծաւորը:

Իսկապէս դժուարագոյն է գտնելը մի մեծաւոր, որը կարողանայ գոհացնել եւ հաճոյ լինել բոլորին, ինչը որ կ'անէր՝ եթէ կարողանար: Այս իսկ պատճառով, մեծաւորը բոլորից պէտք է օգնութիւն եւ յարգանք ստանայ, նաեւ արդարացուի ընդդէմ թերի կրօնաւորների, որոնք հեշտօրէն սկսում են տրտնջալ, երբ հանդիպում են արգելքների ու մերժման:

Ոմանց համաձայն մեծաւորն է, որ պէտք է բոլորին համբերի. բոլորի բերանում մեծաւորի անունն է. եթէ ինչ որ մի բան վատ է կատարւում, յանցանքը մեծաւորինն է. եւ կիսատ մնացած գործերի մեղքը նոյնպէս բարդւում է մեծաւորների վրայ: Բայց այսպիսի տրամադրուածութիւններն առաքինի չեն, ինչպէս որ առաքինի չէ դիրքորոշումը որոշ նախանձոտների, որոնք մեծաւորի անձում յանդիմանելի կէտեր են միայն փնտռում: Չպէտք է հաւատալ եւ ո՛չ էլ համաձայնուել նրանց՝ ովքեր վարկաբեկում են իրենց մեծաւորներին եւ պատճառներ են փնտռում չհնազանդուելու համար: Մինչդեռ մեծաւորը փոխանորդն է Քրիստոսի, որ յանուն Նրա խօսում է Հնազանդութեան իշխանութեանը ենթակայ կրօնաւորի փրկութեան օգտին:

Բաւականին հպարտ են մտածումները եւ վտանգաւոր՝ գործերը նրա, ով յամառօրէն կառչում է սեփական տեսակէտներին, իր անձնական կարծիքը գերադասելով մեծաւորի հրամաններին: Նա, մինչդեռ, ով հաշուի է առնում Հնազանդութեան արժէքն ու արժանիքը, եւ մտաբերում է Յիսուսի ու Սրբերի Հնազանդութիւնը, ուշադրութիւն է դարձնում պարզապէս կատարելուն, առանց յապաղման ու մոթմոթալու, այն՝ ինչ հրամայւում է իրեն, առանց իմանալ կամենալով՝ թէ տուեալ հրամանն ինչու է տրուել: Նաեւ այն՝ ինչը որ մի անիմաստ փոքրկուտիւն է թւում, բարձրացնում է վեհութեան, շնորհիւ Հնազանդութեան, եւ այն շահի է վերածում իր հոգու համար: Այս վարուելակերպն իրօ՛ք առաքինի է, գովասանքի արժանի ու պատուելի, ինչպէս նաեւ առաւել արժանիք չահող է՝ քան արժանիք չահող միւս բոլոր գործերը: Հնազանդութիւնն առաւել ապահով է՝ քան միտքն ու իմացականութիւնը: Յիրաւի, խոնարհ կրօնաւորին է բնորոշ տարեցների խորհուրդներն ընդունելն ու մեծաւորներին Հնազանդուելը:

Ահա՛ գերագոյն իմաստութիւնը. չվստահել սեփական գիտութեանը, այլ հնազանդութեան պարզութիւնը վեր դասել՝ քան բոլոր պատճառաբանումներն ու չափանիշները: Ով վարւում է այսպէս, սիրւում է Աստուծոյ եւ իր մեծաւորից, որը Տիրոջը դրական հաշուեգիր է ներկայացնելու նրա մասին: Ով վարւում է այսպէս, մեծապէս թեթեւացնում է բեռը, որը ծանրանում է մեծաւորի ուսերին, եւ նախապէս կարգի է դնում իր ապագան, որպէսզի մեծ վտանգի չենթարկուի Աստուծոյ դատաստանի օրը:

Ով կամենում է հասնել մինչեւ կատարելութեան ամենաերկնասլաց գագաթները, թող նախեւառաջ հնազանդութեան մարզում կատարելագործուի: Վեհ ու վսեմ առաքինութիւն է հնազանդութիւնը, պարզ ու մաքուր, որ չի ճանաչում յապաղումներ գործադրման մէջ, որ չի փնտռում պատճառներ՝ հրամաններից խուսափելու համար, այլ որ դրանք գործադրում է առանց տրտնջալու: Սրա համար իրեն պատրաստուած է մի փառահեղ թագ, իր դափնեպսակը նա ստանալու է մարտիրոսների հետ, քաջութեամբ պայքարած եւ բնութիւնը սանձահարած լինելու համար, հնազանդուելով մինչ ի մահ: Որովհետեւ դժուարին է հնազանդութեամբ սեփական անձին յաղթելն ու մերժելը: Սա՛ է վանականների ամենագեղեցիկ գովքը եւ ամենաչքեղ վարձատրութիւնը բոլոր կրօնաւորների համար:

Ո՛վ երանելի ու պատուարժան հնազանդութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Հօր յաւիտենական Իմաստութեան կողմից գործադրուած եւ հետեւեալ խօսքերով քարոզուած. «Երկնքից իջայ ո՛չ թէ իմ կամքը կատարելու, այլ նրա՝ ով առաքեց ինձ»<sup>14</sup>: Եւ մինչ քայլում էր դէպի Իր չարչարանքների վայրը, այս խօսքերով էր աղօթում, Իր անձնական կամքի կատարեալ ուրացմամբ. «Հայր, եթէ հնարաւոր է, որ այս բաժակն անցնի ինձնից, այնպէս՝ որ ես այն չխմեմ, թող Քո կամքը կատարուի»<sup>15</sup>:

Յիսուսի Մայրը նոյնպէս, Ամենաարբուհի միշտ Կոյս Մարիամը, պատրաստակամ հնազանդութեան օրինակներ տուեց՝ այս խօսքերով պատասխանելով աւետաբեր հրեշտակին. «Ահա Տիրոջ աղախինն եմ, ինձ խօսքիդ համաձայն թող լինի»<sup>16</sup>: Ահա այս օրինակներին հետեւելով, բարի կրօնաւորը եւս պէտք է ջանայ այսպէս գործել եւ խօսել, խոնարհութեամբ ու յարգանքով պատասխանելով իր մեծաւորին. «Ահա՛ ես, հայր: Սիրով կը կատարեմ, ուժերիս ներածի չափով, այն՝ ինչ կ'ասէք ու կը պատուիրէք»:

Յիրաւի, այս առաքինութիւնն Աստուծոն աւելի ընդունելի է, քան գոհերն ու ընծաները: Հնազանդութիւնը ջնջում է անցեալի յանցանքները, վերապահում է գալիքներից, ազատում է պատիժներից եւ փրկում է յաւիտենական դատապարտութիւնից: Հնազանդութեամբ մարդիկ հաճելի են դառնում Աստուծոն եւ այնքա՛ն մտերիմ Յիսուսին, որ արժանանում են Նրան եղբայր կոչուելուն. «Ով կատարում է իմ երկնաւոր Հօր կամքը, նա՛ է իմ եղբայրը, քոյրը, մայրը»<sup>17</sup>:

Քանի՛ցս թանկարժէք է այս առաքինութիւնը կրօնաւորների մօտ. Աստուծոյ առաջ քաւում է այն բոլոր մեղքերը, որոնք գործել ենք անցեալում եւ որոնց համար ամբաստանում ենք: Ով իր համար ընտրում եւ գործադրում է այս առաքինութիւնը, մեծ ապահովութեամբ է ընթանում դէպի Հայրենիք, որտեղից Ադամն ու Եւան արտաքսուեցին իրենց անհնազանդութեան պատճառով, եւ որի մոտքը մեր առաջ կրկին բացեցին Յիսուսն ու Մարիամը՝ հնազանդուելով: Այս սուրբ ու պարզ հնազանդութիւնն առաւել գերազանց է՝ քան խորը գիտութիւնը, առաւել օգտակար է՝ քան իշխանութիւնը, եւ առաւել ապահով է՝ քան բարձր դիրքերն ու գահերը: Եւ եթէ մի գիտուն կամ մի վեհ դիրք զբաղեցնող մէկը գործադրում է հնազանդութեան առաքինութիւնը, նա պէտք է որպէս օրինակ ներկայացուի եւ մեծ նկատուի Սրբերի մէջ:

Կատարեալ հնազանդութեան օրինակ է փայլում Աբրահամ Նահապետի անձում, որն Աստուծոյ հրամանին հնազանդուելով պանդխտացաւ իր հայրենիքից ու իր ազգատոհմից, եւ մինչեւ իսկ պատրաստ գտնուեց գոհաբերելու իր միածին որդուն: Այդ իսկ պատճառով,

<sup>14</sup> Թվհ 6, 38

<sup>15</sup> Մտթ 26, 42

<sup>16</sup> Ղկս 1, 38

<sup>17</sup> Մտթ 12, 50

արժանացաւ երկնային ձայնի կողմից օրհնուելուն, բազում ժողովուրդների հայր անուանուելուն եւ դարերի ընթացքում բոլոր սերունդների կողմից մեծարուելուն:

Այս առաքինութեան գործադրմանն է յորդորում Պօղոս Առաքեալը Եբրայեցիներին ուղղուած նամակում. «Հնազանդ եղէք ձեր մեծերին եւ ենթակայ, որովհետեւ նրանք յոգնում են ձեր հոգիների համար, որպէսզի իրենց յանձնուած գործը կատարեն ուրախութեամբ եւ ո՛չ թէ ստիպուած. այս վերջինն օգտակար չէր լինի ձեր համար»<sup>18</sup>:

Այս սուրբ հնազանդութիւնը, որ բացարձակ կերպով անհրաժեշտ է փրկութեան համար, աւանդուած է Հին եւ Նոր Կտակարանների բազմաթիւ վկայութիւնների եւ Սրբերի բարեպաշտ օրինակների կողմից: Բոլոր ժողովուրդների օրէնքներն ու կանոնները միաբերան հաստատում են, որ տարեցների ու մեծաւորների հանդէպ նմանօրինակ հնազանդութիւնը պէտք է գործադրուի խոնարհ ենթարկումով ու մեծարանքով:

Ում համար ծանր է հնազանդութիւնը եւ ով յաճախ է նրանից փախչում, թող որ մի պահ խորհրդածի՝ թէ ինչպիսի ենթականեր կը փափաքէր ունենալ ինքը: Անշուշտ թէ կը կամենար, որ բարի ու խոնարհ լինէին, այլ ո՛չ թէ ապստամբ: Թող որ, հետեւաբար, իր մեծաւորի հանդէպ լինի այնպիսին՝ ինչպիսին կը փափաքէր, որ լինէին իր ենթակաները, եթէ մի օր ինքն ընտրուէր մեծաւոր: Թող որ սովորի խոնարհաբար ենթարկուել ուրիշին եւ ակնածանքով հնազանդուել, որպէսզի արժանի լինի ուրիշներին եւս կրթելու եւ որպէսզի կարողանայ կառավարել արդիւնալի կերպով: Եւ թող որ Աստուծոյ առաջ իր վրայ ծանր պատասխանատուութիւն չբարդի, պահանջելով ուրիշներից այն՝ ինչն ինքը չի գործադրում:

Արդեօք ինչպէ՞ս հնարաւոր կը լինի վանքում պահպանել կրօնաւորական վիճակն ու կանոնապահութիւնը, եթէ ենթակաները չհնազանդուեն իրենց մեծաւորներին: Եթէ բոլորը կամենան կառավարել եւ իւրաքանչիւր ոք կամենայ անել այն՝ ինչ իրեն հաճելի է, այդ վանքում մեծ խառնաշփոթ կը տիրի. կանոնապահութիւնը կ'անհետանայ, կ'աճի տարաձայնութիւնը, Աստուծոյ երկիւղը կը հեռանայ եւ կը տիրի մարմնի ազատութիւնը: Իրօք, ուր չի գործադրուում հնազանդութիւնը եւ յարգանք չի ստանում մեծաւորը, այնտեղ իշխում է կործանումը:

## Գլուխ Ե.

### ՄՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱԴՊՐՁՈՒ ՆԵՐԱՆՁՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ

Մարդը թէեւ դիւրութեամբ է հակուում դէպի արտաքին իրողութիւնները եւ յօժարութեամբ է մխիթարութիւններ ընդունում արարածներից, պէտք է սակայն պատրաստակամօրէն վերադառնայ ինքն իր մէջ հոգու ամփոփմամբ, ներքուստ միշտ աւելի ու աւելի շնորհներ չկորցնելու համար, չդառնալու համար անյարատեւ ու անապահով, տեսնելու եւ հետաքրքրութիւններ ճանաչելու իր ցանկութիւններին հետեւելով:

Հետեւաբար, անդադար հսկիր սրտիդ պահպանմանը եւ առիթը փնտռիր առանձնանալու ու ներանձնանալու համար: Եթէ հարկաւոր է, մտքիդ բռնութեամբ ստիպիր մտնելու սրտիդ խորութիւններից ներս, որովհետեւ եթէ ներքուստ խաղաղութիւն չունես, ոչնչի չի ծառայի այն՝ ինչ կը ստանաս արտաքուստ, երկրային իրողութիւններից:

Խաղաղութեան եւ սրտի պահպանման համար մեծապէս օգտակար է, որ արտաքին զբաղմունքներդ տնօրինես ըստ օրակարգի, ժամանակ յատկացնելով հոգեւոր հրահանգումներին, այնպէս՝ որ քաջ իմանաս՝ թէ երբ պէտք է ընթերցես, երբ աղօթես, երբ աշխատես, երբ մտածես, երբ լռես, երբ խօսես, երբ առանձնանաս եւ երբ լինես ուրիշների ընկերակցութեամբ: Ամէն բան իր ժամանակին արա բարի կամքի ընտրողութեամբ եւ երբեք ազատ մի՛ մնա ինչ որ մի սուրբ գործից կամ բարեպաշտ զբաղմունքից:

<sup>18</sup> Եբր 13, 17

Կան բաներ, որոնցից պէտք է խուսափես բացարձակ կերպով. դատարկ նիւթերի շուրջ զրոյցները, աշխարհային նորութիւնները, կանանց հետ մտերմութիւնը, երիտասարդների ընտանի ընկերութիւնը, ազգականների եւ ազգականներին, ծանօթների եւ ծանօթներին այցելութիւնները, ինչպէս նաեւ հիւրերի յարգալի ողջոյնները: Սրանք բոլորն էլ բաներ են, որ ցրուածութիւն են պատճառում մտքին եւ թունաւորում են խիղճը: Իսկ ով հաճոյք է ստանում նմանատիպ իրողութիւններից, աղքատանում է աստուածային գանձերից:

Կան մինչդեռ բաներ, որոնք պէտք է խստութեամբ պահես. լուութիւնն ու պահքը, հսկումներն ու այն բոլոր խստակրօնութիւնները, որոնք սահմանուած են մարմնի սանձահարմանը: Յիրաւի, եթէ մարմինը չենթարկենք վանական կանոնապահութեանը, կ'ապստամբի հոգու դէմ եւ հոգու մէջ փորձութիւններ կ'արթնացնի, որոնք կարող են կուրացնել բանականութիւնը եւ սառեցնել աստուածապաշտութեան եռանդը:

Ուրիշ բաներ էլ կան, որոնք պէտք է համբերութեամբ կրես. ժամանակաւոր բարիքների պակասը, բարի անձանց կողմից չհասկացուելը, թշնամիների չարախօսութիւնները, մարմնական հիւանդութիւնները, թերի հոգիների վարմունքը, խիստ խօսքերը, հոգեւոր միջթարութիւնների բացակայութիւնը, ընկերների կողմից ստացուած վշտերը: Սրանցով է մարդը փորձուած եւ մաքրուած, ինչպէս կրակի հնոցում: Եւ այս նեղութիւնները, առաքինի կերպով կրելու դէպքում, քո համար կ'ապահովեն յաւիտենական առատ վարձատրութեան արժանիքը:

Բաներ էլ կան, որոնք քեզնից պէտք է անյապաղ հեռացնես. բացայայտ կրքերն ու մեղքերը, որոնք դէմ են Աստուծոյ պատուիրաններին: Երբեմն ներկայանում են ծածուկ, օրինաւոր պատճառաբանումների ներքոյ քողարկուած, բայց ցանկասիրութիւնն ու գաղջութիւնը շատ աւելի առաջ են մղում, քան օրինաւոր սահմանները: Այս իսկ պատճառով, հարկաւոր է նախապատրաստուել խաբէութեան թոյնի դէմ:

Հետեւելով, ուստի, իմաստունների խորհուրդներին, սիրտդ ամենայն զգուշութեամբ ու ջանասիրութեամբ պահպանիր, որպէսզի այնտեղ չմտնի անմաքուր ոչինչ, որ վշտացնում է Աստուծուն: Եթէ անդրադառնում ես, որ գործում ես ինչ որ մի կրքից մղուած, շտապիր ընդունել յարմարագոյն դարմանը: Եթէ ուշացնես, կրքերն աւելի կը զօրանան եւ իրավիճակը գնալով աւելի կը վատթարանայ: Չկայ մի այնքան ծանր մոլութիւն, որն անհնարին լինի բուժելը, եթէ ցոյց է տրուած վէրքը եւ խորհուրդ է հայցուած հոգեւոր բժշկից: Բայց ա՛յլ բան է դարմանը ճանաչելը եւ ա՛յլ բան է այն ընդունելը: Բազմաթիւ անձինք քաջ գիտակից են, թէ ինչ պէտք է անեն եւ թէ ինչերից պէտք է խուսափեն, բայց չեն մտահոգուում իրենց սիրտն ու լեզուն պահպանելու, եւ հետեւաբար, առաջին իսկ առիթին, յաղթում են իրենց մի ժամանակուայ սովորոյթներից:

Այս կեանքի ընթացքում, որն ամբողջովին շարունակական փորձութիւն է, հարկաւոր է ամէն օր պատերազմել, հաստատուն առաջադրանքներ կատարել եւ աստուածային շնորհն աղերսել, մինչեւ որ կը վերջանայ փոփոխական այս կեանքը:

Անհնարին է գտնել, այստեղ՝ երկրի վրայ, մի դեղորայք, որը վերջնականօրէն բժշկի կրքերի բոլոր հիւանդութիւնները, այն աստիճան, որ այլեւս չզգանք ցանկասիրութեան ոչ մի ազդակ, քանի որ սա պարզեւեւներից մէկն է գալիք երանութեան, որը Սրբերին է խոստացուած: Բայց այդուամենայնիւ, շնորհի օգնութեամբ կարող ենք ճնշել մեղանշական մղումները, կարող ենք խուսափել մեղքի առիթներից, իսկ դժբախտ սայթաքումների դէպքում կարող ենք ապաշխարութեամբ լուացուել եւ վերսկսել պայքարը:

Մեծագոյն ձեռնարկ է կրքերին յաղթելն ու արտաքին զգայական իրողութիւններով չհրապուրուելը: Իրօք, կա՛մ մղում է քեզ Արարիչը, կա՛մ մղում է արարածը, եւ մտքի կողմնորոշման համաձայն՝ դիւրութեամբ այս կամ այն կողմ են ուղղուած սրտի զգացումներն ու մարմինը: Իւրաքանչիւր մարդ անում եւ ասում է միմիայն այն՝ ինչը որ խոր արմատներ է գցել իր սրտում: Ասում է Տէրը. «Բարի մարդն իր բարի գանձերից դուրս է հանում բարիք, իսկ չար մարդն իր չար գանձերից դուրս է հանում չարիք»<sup>19</sup>:

<sup>19</sup> Մտթ 12, 35

Պէտք է, ուրեմն, բաւականին զգոյշ լինես սրտիդ պահպանութեան գործում եւ տեսնես՝ թէ ինչպիսի մտքեր ու փափաքներ են պտտուում քեզնում, որպէսզի իսկոյն դուրս վռնդես չարերը, համաձայնուես ու գործակցես բարիներին, եւ մշտապէս ու մեծ լրջութեամբ խորհես հոգուդ առաւելագոյն բարիքի մասին, Մարգարէի խօսքերի համաձայն. «Հոգիս տեւապէս վտանգի մէջ է, բայց օրէնքներդ եւ չմոռացայ»<sup>20</sup>: Եթէ այդպէս էր վարուում սուրբ թագաւոր Դաւիթը, որի վրայ էր ծանրանում ամբողջ երկրի հոգսը, որքա՛ն աւելի պարտաւոր է նմանօրինակ օրինապահութեամբ փայլել կրօնաւորը, որն Աստծոյ առաջ ուխտել է լինել կանոնապահ, եւ որն աշխարհին վերաբերուող բոլոր մտահոգութիւններից հրաժարուելով՝ իսկապէս կարող է մտածել իր անձի յաւիտենական փրկութեան մասին:

Սրտի ամբժութեանն առաւելագոյն չափով նպաստաւոր են մենութիւնն ու լռութիւնը. ուսանել Սուրբ Հայրերի գիտութիւնը, ընթերցել հոգեշահ գրքեր, աղօթել, խորհրդածել, աշխատել կենդանական եւ բուսական աշխարհի հետ շփման մէջ, եւ չկամենալ իմանալ աշխարհային անցուղարձերը: Որովհետեւ լսուած ու տեսնուած չարն աւելի է վնասում, քան օգնում է գրքերից ընկալուած բարին: Դժուար է, յիշաւի, գտնել մի այնքա՛ն բարի արարք, որն որոշակի չափով խառնուած չլինի չարի հետ: Իւրաքանչիւր խօսքում կամ գործում թշնամին նետում է իր ցանցերը՝ մտքի ու շարժումները հոգեւոր իրողութիւններից հեռացնելու համար: Նա շատ լաւ է ճանաչում մարդկային սիրտը, եւ գիտէ՝ որ եթէ այն չի հրճուում բարիքի մէջ, շուտով սահում է դէպի չարը:

## Գլուխ Զ.

### ԼԵՉՈՒԻ ՊԱՀՊԱՆՈՒԹ ԵՒ ԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆԵՐ ՀԱՆՈՒՄ

Ամուր կղպանք դիր լեզուիդ վրայ, որովհետեւ մի օր քեզնից հաշիւ է պահանջուելու իւրաքանչիւր դատարկ խօսքիդ համար<sup>21</sup>: «Եթէ մէկն իրեն կրօնաւոր է համարում, բայց չի սանձում իր լեզուն», ասում է Յակոբոս Առաքեալը, «խաբում է իր սիրտը եւ իր կրօնաւորութիւնն ունայն է»<sup>22</sup>: Լեզուի պահպանման մէջ թերացումից են յառաջ գալիս, հետեւաբար, բոլոր չարիքները, որոնցից մինչդեռ ազատ է լուսկեաց մարդը, որն որեւէ յանցանք խոստովանելու կարիքը չի ունենում:

Հոգատար եղիր, ուրեմն, կամովին լռելու եւ դատարկ խօսքերից չտարուելու, որովհետեւ չափազանց երկար խօսակցութիւնները հանգցնում են եռանդը, ծնում են ցրուածութիւն, կորուստի են մատնում ժամանակը, վնասում են խղճին եւ վշտացնում են այլոց:

Լռութիւնը կրօնաւորների հնագոյն կանոններից մէկն է, Սուրբ Հայրերի կողմից հաստատուած եւ մեծ ջանասիրութեամբ պահպանուած: Ով թերանում է այս կանոնի դէմ, վշտացնում է Աստծուն եւ բոլոր Սրբերին:

Յիսուս Քրիստոսն ասում է. «Ձեր խօսքերը թող սրանք լինեն. այո՛ն՝ այո, ոչը՛ ոչ: Աւելին չարից է»<sup>23</sup>: Այս խօսքերով նա ուսուցանում է խօսել համառօտ եւ յստակ, երբ թոյլատրուած է, բայց նաեւ լռել, երբ խօսելն արգելուած է:

Եթէ կամենում ես լաւ պահպանել լռութիւնը, փախիր մարդկանցից եւ գնա ինչ որ մի ծածուկ տեղ, այնտեղ աղօթելու, կամ էլ խուցը քաշուիր՝ ընթերցելու եւ գրելու: Միշտ աւելի լաւ է, որ սաղմոսներ ասես կամ կիրակնօրեայ աղօթքներ կատարես մեղքերիդ թողութեան համար, քան թէ աշխարհային հարցերի շուրջ շատախօսելով ժամանակ վատես:

<sup>20</sup> Սղմ 118, 109

<sup>21</sup> Մտթ 12, 35

<sup>22</sup> Յկբ 1, 26

<sup>23</sup> Մտթ 5, 37

Ոչինչ չանելը կամ դատարկ հարցերի շուրջ խօսելը չպէտք է նկատուեն որպէս սթափեցուցիչ զբօսանք կամ հանգիստ, այլ ակելի՛ մի նզովք, որովհետեւ մոռացութեան է մատնուում Աստծոյ գործը եւ ապուշութիւններ են խօսուում:

Գնա՛, ուրեմն, աշխատանքիդ եւ Աստծոյ պարտէզում աշխատիր յաւիտենական կեանքի դրամի համար, այնպէս՝ որ ընտանիքի Հայրը չկարողանայ յանդիմանել քեզ. «Ինչո՞ւ ես ամբողջ օրն այստեղ պարապ կանգնած»<sup>24</sup>:

Աստուածաշունչը գովում է բարիք գործողներին: Յիսուս Քրիստոս վարձատրում է հաւատարիմ ծառային, բայց յանդիմանում է ծոյլին ու անկանոնապահին, եւ հրամայում է վերցնել նրանից շնորհը, որը նախապէս տրուել էր նրան, եւ այն տալ ուրիշին, նրան՝ ով մեծ եռանդով է աշխատել:

Գալու է, յիրաւի, ժամանակը, երբ այլեւս չես կարողանալու աշխատել, եւ թերեւս մի խօսք անգամ չես կարողանալու ասել ծանր հիւանդութեանդ պատճառով: Սրա համար էլ միշտ պէտք է ուշադիր լինես եւ երկիւղով յիշես այդ վերջին ժամը, որպէսզի երբ դեռ ձեռքերդ դատարկ չլինեն:

Ահա այս պատճառով էր Յիսուս Իր աշակերտներին ասում. «Հարկաւոր է, որ ես կատարեմ ինձ առաքողի գործերը, քանի դեռ ցերեկ է: Գալիս է գիշերը, երբ ոչ ոք չի կարող աշխատել: Քանի դեռ աշխարհում եմ, աշխարհի լոյսն եմ»<sup>25</sup>:

Օրինակ առ, ուրեմն, Յիսուս Քրիստոսից, Պօղոս Առաքեալից, Անտոն Անապատականից, Սուրբ Օգոստինոսից, Սուրբ Հերոնիմոսից, Սուրբ Բենեդիկտոսից, Սուրբ Ֆրանչիսկոսից, Սուրբ Դոմենիկոսից եւ բոլոր Սուրբ Հայրերից, որոնք կանոններ գրեցին կրօնաւորների համար եւ վանական ընտանիքներ հիմնեցին: Նրանք իսկապէս շատ աշխատեցին իրենց Միաբանութիւններում եւ յաւիտենական կեանքի համար խստօրէն պատճեցին իրենց մարմինները բազում ծոմերով, մենութեան ու լռութեան մէջ, յաճախակի հսկումներով ու աղօթքներով եւ ուրիշ հրահանգներով, որոնք բոլորն էլ Տիրոջ ծառայութեան մէջ շատ հաճելի են Աստծուն:

Ի՞նչ ես որոշում, ուրեմն: Այստեղ ու այնտեղ շատախօսելով ու թափառելով մի՞թէ յոյսն ունես ստանալու փառաւորագոյն դափնեպսակը, որին Աստծոյ Սրբերը հասան իրենց արիւնը հեղելով եւ ծանր նեղութիւններ կրելով: Ո՛չ, բացարձակապէս: «Եթէ չապաշխարէք, բոլորդ էլ նոյն կերպ կը մեռնէք», ասում է Յիսուս<sup>26</sup>: Խիստ վճիռ է, բայց օգտակար է վարքիդ ուղղմանը, առաջնորդելով քեզ դէպի կանոնապահութիւն: Այժմ իսկ սրբագրիր կեանքդ եւ ոչ մի պատիժ չես կրի, ակելին՝ կ'ունենաս յաւիտենական փառքը:

## ԳՐՈՒՄ Է.

### ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱԻՐԵԼ ԽՈՒՅԻ ԱԻՋԱՌՈՒԹԻՒՆ

Ով սիրում է իր խուցը եւ յօժարութեամբ մնում է նրա ներսում, ազատուում է բամաթիւ մեղքերից ու փորձութիւններից: Որքան ակելի յարատեւութեամբ բնակուես նրանում, այնքան ակելի սիրելի ու հաճելի կը դառնայ քեզ: Որքան ակելի անհոգ լինես եւ հազուադէպ գտնուես ներսում, այնքան ակելի խորշելի ու ձանձրացուցիչ կը դառնայ քո համար:

Բախտաւոր է նա՛՝ ով սիրում է իր խուցը եւ բնակուում է նրանում. նրան կը կրթի Սուրբ Հոգու օծումը: Բախտաւոր է նա՛՝ ով հնարաւորութիւնն ունի խուցի ներսում բնակուելու եւ նրանում ապրում է մինչեւ իր կեանքի վախճանը: Վա՛յ նրան՝ ով առաջին իսկ առիթին լքում է խուցը եւ սիրում է դրսում լինել. շա՛տ շուտով կը խաբուի, անակնկալի կը բերուի ու կը վնասուի:

<sup>24</sup> Մտթ 20, 6

<sup>25</sup> Յվհ 9, 4-5

<sup>26</sup> Ղկս 13, 3

Խուցի առանձնութիւնը կարօտով չփնտռելու պատճառով շատերը զանազան առիթներով վերադարձան աշխարհ եւ կորստեան մատնուեցին թշուառաբար:

Վա՛յ մեզ, եթէ չկարողանանք նրանում մնալ մինչեւ որ կը տայ իր հասուն պտուղը: Կրօնաւորը պէտք է այսպէս վարուի. համարի – ամէ՛ն օր – որ այսօր իսկ թողնելու է աշխարհը եւ դրուելու է գերեզման: Այսպիսի մէկի համար խուցը ձանձրոյթ եւ նեղութիւն չէ, այլ մի վայր է խաղաղութեան ու անդորրի: Խուցն ինչպէս որ դրախտ է հաւասարակշռուած ու ծանր մարդու համար, այնպէս էլ բանտ է ու շղթայ՝ անհանդարտ հոգու համար:

Բարի եւ գովքի արժանի գործ է Աստծոյ սիրոյ համար խցում հոգեգուարթութեամբ բնակուելը, որովհետեւ մարտիրոսներից շատերը հէնց բանտարկութեան էին դատապարտուում Քրիստոսի Անուան համար: Բարի կրօնաւորը, հետեւաբար, կամովին ընտրում է կապուած լինել խուցին, Սրբերի արժանիքներին հաւասարուելու համար:

Թող որ քեզ աւելի Աստծոյ երկիւղը մղի՝ քան երկաթը, աւելի սէրը՝ քան բացայայտ անհրաժեշտութիւնը: Եթէ քեզ չի զսպում սէրը, գէթ թող զսպի Աստծոյ երկիւղը: Վատ չէ, եթէ դժոխքի վախից մղուած՝ ինքդ քեզ փակում ես խուցի ներսում, մեղքերիդ փոխարէն հատուցելու նպատակով: Վատ են բոլոր նրանք՝ ովքեր տրւում են սրտի ու հոգու դատարկապորտութեանը: Լաւ փակուած է նա՛ ով նուիրուած է Աստծուն եւ խուցից դուրս գալու կարիք չի զգում:

Եթէ կամենում ես մնալ խուցի ներսում, երբեք պարապ մի՛ մնա: Ծուլութիւնն ու դատարկութիւնը խուցից դուրս են վտարում շատախօս կրօնաւորին: Մինչ նա՛ ով սիրում է լռութիւնը եւ աշխատում է խաղաղութեամբ, որակեալ պահպան կը լինի իր խուցի համար:

Եթէ վրադ յարձակում է ձանձրոյթը, դիմադրիր ի սէր Քրիստոսի, եւ ոչ մի պատճառով մի՛ հեռացիր խուցիցդ: Եթէ համբերութեամբ դիմադրես, բանտդ վայելքների դրախտի կը վերափոխուի: Քրիստոսի Անուան համար բանտարկուած Սրբերն յաճախ էին այցելութիւններ ստանում հրեշտակների կողմից եւ առատօրէն մխիթարում էին: Եթէ Քրիստոսի սիրոյ համար համբերութեամբ փակուես խուցիդ ներսում, Աստծոյ ողորմութեամբ շուտով քեզ նոյնպէս կը հասնեն երկնային լոյսը, մաքուր խղճի հրճուանքը եւ հոգեւոր մեծ յառաջադիմութիւն:

Ով մնում է խուցի ներսում, բազմաթիւ վտանգներից ազատում է: Ով այնտեղից հեռանում է, ենթարկում է այդ վտանգներին:

Անհնարին է բաւարար չափով բացատրել առանձնութեան օգտակարութիւնը, ինչպէս նաեւ անհնարին է բաւարար չափով բացատրել վնասները, որոնց ենթարկում են խուցից դուրս յաճախ գտնուողները: Ով հաւատարմօրէն մնում է խուցի ներսում, նման է նրան՝ ով պահպանում է իր բերանը. տրտունջներ չի լսում, գանգատներին չի անդրադառնում, ունայնութիւններ չի տեսնում եւ չի տրւում թեթեւութիւնների:

Ով իսկապէս սիրում է իր խուցը, ընթերցում է կամ աղօթում, արտասուում է կամ խորհրդածում, գրում կամ սրբագրում է գրքեր եւ միշտ զբաղուած է ինչ որ մի օգտակար գործով:

Ով իսկապէս սիրում է իր խուցը, երկնքի քաղաքացի է, Աստծուն մտերիմ, հրեշտակներին ընկերակից: Այդպիսին ճանաչում է գաղտնիքները, փախուստի է մատնում սատանաներին, պայքարում է մոլութիւնների դէմ, արհամարհում է աշխարհային իրողութիւնները, ազատ է մտատանջումներից, հանգիստ եւ խաղաղութիւն ունի, սիրում է Աստուածաշունչը, ըմբռնում է ճշմարտութիւնները, ճաշակում է մաքրութիւնը, յարատեւ է աղօթքի մէջ, մտամփոփ է սուրբ մտորումներով եւ չի հաշտում մտային ցրուածութեան հետ:

Մտածիր՝ թէ տիեզերքում գոյութիւն ունէ՞ք միայն Աստուած եւ դու, եւ սրտումդ մեծ խաղաղութիւն կը զգաս:

Յիշիր, որ հրեշտակը Մարիամին յայտնուեց մինչ նա աղօթում էր իր սենեակում, եւ ո՛չ թէ՛ երբ դրսում խօսում էր մարդկանց հետ: Այս իսկ պատճառով, ով կամենում է ճանաչել երկնային գաղտնիքները, պէտք է մարդկանցից հեռու մնայ: Իրօք որ այդպէս վարուեց Մովսէսը, որը մարդկանց բազմութիւնը թողնելով՝ Աստծոյ հետ միայնացաւ:

լեռան վրայ, արժանի լինելու համար ստանալու Տիրոջ Օրհնքը: Երբեմն վերընթերցիր այդ պատմութիւնները, որպէսզի քո համար քաղցր լինի խոսցիդ ներսում բնակուելը:

## Գլուխ Ը.

### ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցին Աստուծոյ եւ Սուրբ Հրեշտակների սրբազան վայրն է: Այնտեղ Եկեղեցու պաշտօնեաները կատարում են աստուածային պաշտամունքը եւ մեծարանքով ու եռանդով երգում են սրբազան շարականները:

Հրեշտակների երկնային պաշտօնը վստահուած է նաեւ կրօնաւորներին: Հրեշտակների գլխաւոր գործը Աստուծոն գովերգելն է, կրօնաւորներինը՝ ուշադրութեամբ սաղմոսելն ու աղօթելը: Հոգատար եղիր ժամերգութեանը ներկայ լինելու կամ մասնակցելու՝ ինչպէս եթէ Հրեշտակներով շրջապատուած լինէիր:

Յիշիր Յիսուսին, սիրելի Տիրոջդ, մտուրի մէջ դրուած կամ Խաչին գամուած եւ կամ Հօր աջ կողմը համբարձած, այնպէս՝ որ կարծես թէ գտնուում եւ երգում ես Նրա առաջ: Թող որ Նա սրտիդ ներսում լինի եւ շուրթերիդ վրայ, որպէսզի անկեղծ ու յստակ արտասանես Սուրբ Հոգու խօսքերը. այս գործի համար եւ այս նպատակով է հաստատուել ժամերգութիւնը:

Յիսուսին աջ կողմումդ պատկերացրու եւ Մարիամին՝ ձախ կողմումդ, իսկ բոլոր Սրբերին՝ նրանց շուրջբոլորը: Բոլոր եղբայրակիցներդ քո համար թող լինեն իբրեւ Աստուծոյ Հրեշտակները: Եւ մտածիր, որ երկնքում նոյնպէս երգելու ես նրանց հետ՝ որոնց հետ այժմ երգում ես երկրի վրայ:

Աստուածային օրհներգութիւններին պատշաճում է մաքուր կեանքն ու խաղաղ խիղճը: Անհանդարտ ու անեռանդ մարդն աղօթում է քնոտութեամբ ու մտքի ծանրութեամբ:

Եթէ յաղթես ծուլութեանը եւ սիրտդ հեռու պահես ցրումներից, ճանապարհ պատրաստած կը լինես եռանդի համար եւ միշտ պատճառներ կ'ունենաս ուրախանալու սոյն գործովդ:

Բազում մտահոգութիւնները խեղդում են Աստուծոյ խօսքը, իսկ երկարատեւ խօսակցութիւնները պատճառում են մտքի ցրում: Այն՝ ինչը որ մարդն անում է նախապէս, կրկին նրա մտքին է ներկայանում աղօթքի ժամանակ. թշնամին խառնում է եւ առիթն օգտագործելով՝ ցանում է որոմ:

Ջերմեռանդ Հոգին ժամերգութեան ժամանակ մտածում է միմիայն Աստուծոյ եւ իր մասին, իրեն կարծես թէ դէպի երկինք փոխադրուած ու բարձրացած զգալով:

Ժամերգութեան աւարտին անձը արտաքին իրողութիւնների մի՛ տուր, որպէսզի չկորցնես աղօթքի միջոցով ձեռքբերուած շնորհը, այլ աւելի՛ ջանա կենտրոնանալ, փափաքներդ շրթունքներով արտայայտելուցդ յետոյ, եւ հեռու մնա աղմուկներից, երախտագիտութեան առաւել բոցավառ զգացումների մէջ ընկղմուելով, մտաբերելով երգուած խօսքերը:

Քո համար ի՞նչ օգուտ ունի Աստուծոն մի պահ փառաբանելը, եթէ յաջորդ վայրկեանին սկսում ես խօսել աշխարհային դատարկ իրողութիւնների մասին: Ունայն սրամտութիւններով ու անմտութիւններով վտանգի մի՛ ենթարկիր օրհներգութիւններիդ մեծարժէք պտուղները եւ գործը, որն Աստուած կատարեց հոգուցդ ներս: Հակառակ դէպքում կամաց կամաց կ'աներեւութանայ եռանդդ, որն ապահով էր լուսութեան պաշտպանութեան ներքոյ: Իսկ երբ յոգնածութիւն ես զգում ինչ որ մի չափազանց երկար ժամերգութեան պատճառով, մտածիր՝ որ հազիւ վերջանայ՝ սաւառնելու ես երկինք: Իսկ եթէ սա բաւական չէ, մտածիր՝ որ շատ աւելի դիւրին է երեք կամ չորս ժամ արթուն մնալն ու սաղմոսելը, քան թէ քաւարանի կրակներում միայն մի ժամ այրուելը:

Մեծ արժանիք է կանոնական ժամերգութիւններին ներկայ գտնուելը եւ եկեղեցիում Աստուծոյ օրհնութիւնները բազմաթիւ եղբայրակիցների ընկերակցութեամբ զուարթութեամբ երգելը:

Եթէ չենք կարողանում աղօթել առանց ընդհատումների եւ երկնաբնականների հետ նուիրուել հայեցողութեանը, պարտաւոր ենք ջանասիրութիւն ներդնել գոնէ այս գործին սահմանուած ժամերում, սաղմոսասացութիւնն ուշադրութեամբ եւ եռանդով կատարել կարողանալու համար:

Այսքա՛ն սուրբ ծառայութեան մէջ շահում ես ո՛չ միայն դու, Տիրոջից արժանանալով յաւիտենական վարձատրութեան, այլ օգտակար ես լինում Քրիստոսի բոլոր հաւատացեալներին եւ յատկապէս ննջեցեալներին, կանոնական ժամերգութիւնների եւ Պատարագի ժամանակ թողութիւն հայցելով նրանց մեղքերին: Եւ սա կարող ես կատարել այնքան աւելի արդիւնալի կերպով, որքան աւելի մեծ յարատեւութեամբ ու եռանդով կ'աղօթես բոլորի համար:

Ուշադրութեամբ արտասանուած ոչ մի խօսք վարձատրումից զուրկ չի մնայ, ինչպէս որ առանց պատփի չի մնայ ծովութեամբ ու անհոգութեամբ արտասանուած խօսքը, որովհետեւ փոքր մեղք չէ Աստծոյ եւ Սրբերի ներկայութեան կանգնելը ցրուած սրտով եւ սրբագան խօսքերին սակաւ ուշադրութիւն դարձնելը: Յարգանքի որքա՛ն պակաս է ենթադրում ոչ մի կարեւորութիւն չունեցող խօսքերի կամ գործերի մասին մտածելն այնտեղ՝ ուր հարկաւոր է միմիայն աստուածային գործերով ու խորհուրդներով զբաղուել, մի կողմ թողնելով բոլոր մտահոգութիւնները:

Ահա այսպէս է ճանաչուած իսկապէս ներանձնացած կրօնաւորը. եթէ եռանդով նուիրուած է Աստծոյ օրհնութիւններին եւ տհաճութիւն է զգում այն ամէնի նկատմամբ՝ ինչը որ իրեն չի օգնում մտածելու եւ կատարելու Աստծուն հաճելի գործերը եւ հաղորդակցութեան մէջ մնալու հրեշտակային հոգիների հետ: Եւ միշտ աղօթել՝ ճիշտ նշանակում է գովել, օրհնել եւ փառաւորել Աստծուն ամբողջ սրտով, ինչպէս Դաւիթն ասում է սաղմոսում. «Ամէն ժամ օրհնելու եմ Տիրոջը, Նրա օրհնութիւնն ամէն ժամ շուրթերիս վրայ է լինելու»<sup>27</sup>:

Այս իսկ պատճառով, ով Աստծոյ օրհնութիւններին նկատմամբ անհոգ է, համր կամ բացակայ, Նրան մտերիմ չէ եւ ո՛չ էլ՝ երկնաքաղաքացի, քանի որ հրեշտակներն անդադար օրհնում են Աստծուն եւ միաձայն «Սուրբ, սուրբ, սուրբ»ն են երգում ի փառս Ամենասուրբ Երրորդութեան: Իրաւացիօրէն հրեշտակները կոչուած են նաեւ երկնքի թռչուններ, որովհետեւ իրենց թեւերի սօսափիւնով մեզ երգելու են հրաւիրում:

Հաւատացեալ հոգու բոլոր գործերի մէջ չկայ այնքան պտղաւատ մի զբաղմունք կամ Աստծուն այնքան հաճելի մի ծառայութիւն, որքան յաճախ աղօթելը եւ եռանդով ու սրտի ամբողջ սիրով Աստծուն փառաբանելը:

Վա՛յ, ուրեմն, նրանց՝ ովքեր չեն այրուում աստուածային սիրով, այլ շարունակ ուղղուած են դէպի այլեւայլ զբաղումներ. ովքեր չեն աղօթում եւ ուրիշներին նոյնպէս չեն թոյլատրում աղօթել. ովքեր մինչ պարտաւոր էին քաւել իրենց մեղքերը, նորանոր յանցանքներ են աւելացնում արդէն գործուածների վրայ: Այդպիսիք են նրանք՝ ովքեր ուշ են մտնում եկեղեցի, բայց դուրս են գալիս առաջինները. ովքեր սիրում են համառօտ Պատարագները, բայց տրուում են երկարատեւ խնջոյքների. ովքեր շարունակ ժամանցներ ու ցրումներ են վայելում, բայց ժամանակ չեն գտնում պատշաճ կերպով երախտագիտութիւն յայտնելու Աստծուն ստացած բարիքների համար, քանի որ առաւել ուշադրութեամբ սնուցում են մարմինը՝ քան հոգին:

Բարի կրօնաւորը, որ նուիրուել է Աստծոյ ծառայութեանը, չպէտք է այդպէս վարուի, այլ ընդհակառակն, քանի որ գիտակից է Աստծուց ստացած բոլոր բարիքներին, որոնք անսահման են, հոգատար պէտք է լինի Յիսուսի հետ միասին հսկելու եւ աղօթելու՝ օրհնութիւններ ու սաղմոսներ երգելով, Սուրբ Զոհը մատուցելով, բարեպաշտ խորհրդածութիւնների մէջ յարատեւելով եւ իր սիրտն անդադար առ Աստուած բարձրացնելով:

<sup>27</sup> Սղմ 33, 2

## Գլուխ Թ.

### ՄԵԾԱԳՈՅԱ ԽՈՇԵԱՌԹԵԱՆ ՈՒ ՉՊՓԱԻՐՈՒԹԵԱՆ ԱՍԱԻՆ, ՈՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՊԱՀՊԱՏՆԵԼ ՀՈԳԵՒՈՐ ԲՈՂՈՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Աստծոյ ծառան ամէն բան պէտք է անի խոհեմութեան հսկողութեան ներքոյ: Աշխատիր, ուրեմն, հետեւել կանոնաւոր միջին ճանապարհին, այնպէս՝ որ չափազանց ներողամիտ չգտնուես մարմնիդ հանդէպ, բայց ո՛չ էլ չափազանց խիստ լինես եռանդիդ մէջ, որովհետեւ այդպէս վարուելով՝ նպատակիցդ հեռանալու վտանգին կ'ենթարկուես:

Եթէ կամենում ես պարելակերպիդ մէջ հաստատուն կարգ սահմանել, քայլեր երկու ծայրայեղութիւնների մէջտեղում, այնպէս՝ որ հպարտութիւնից մղուելով չփափաքես հասնել ուժերդ գերազանցող իրողութիւնների, բայց ո՛չ էլ վատասրտութեամբ անհոգութեան մատնես այն բաները, որոնք կարող ես կատարել մեծագոյն յարմարութեամբ:

Աստուած քեզնից չի պահանջում կործանել մարմինդ, այլ՝ սանձահարել կրքերդ: Ձի պահանջում անհնարին բաներ, այլ այն՝ ինչն օգտակար է փրկութեանդ: Քեզ իմաստուն խորհուրդներ է տալիս եւ կեանքի համար անհրաժեշտ բաներ, որպէսզի մարմնիդ ծառայութիւնն օգտագործես ի նպաստ հոգուդ յառաջադիմութեան եւ ոչնչով չխախտես խոհեմութեան չափանիշը:

Այսօր վազել, իսկ վաղն ուժասպառ լինել. սա Աստծոյ ճանապարհներում յառաջադիմել է, այլ՝ շփոթուել եւ նոյն տեղում մնալ: Այսօր կամենալ ամէն ինչից զուրկ մնալ, իսկ վաղն աւելորդ առարկաներ ընդունել. սա աղքատութեան սէր է, այլ՝ կրքեր բորբոքել: Այսօր մերժել անհրաժեշտը, իսկ վաղն արտակարգ խորտիկներ ցանկանալ. սա խստակրօնութիւն է, այլ՝ դաշնակցութիւն կոկորդի հետ: Այսօր չկամենալ ուտել այն՝ ինչ կայ սեղանի վրայ, իսկ վաղը տրտնջալ անհրաժեշտ սնունդի պակասի համար. սա մահացուցման հոգու նշան է, այլ՝ մի փաստ է անհաւասարակչութեան: Կարդալ ու գրել գլխացաւ ունենալու աստիճան. սա հոգին սնուցանել է, այլ՝ անկարող դառնալ ուրիշ բարի գործեր եւս կատարելու: Այսօր մի բառ անգամ չարտասանել, իսկ վաղը չկարողանալ արգելակել լեզուն եւ թերանալ լռութեան մէջ. սա չի նշանակում ջերմեռանդ լինել Միաբանութեան կանոնների պահպանմանը, այլ՝ Միաբանութեան մէջ դայթակղութեան պատճառ լինել շատերի համար: Այսօր երգել այնքան բարձր ձայնով, որ վաղն անհնարին լինի բերանը բացելը. սա Աստծուն փառաբանել է, այլ՝ ներկաներին խանգարել: Այն ամէնը, որ դուրս է չափաւորութեան սահմաններից եւ համաձայն է խոհեմութեան կանոններին, Աստծուն հաճելի է եւ սովորաբար երկար չի տեւում:

Հոգեւոր բոլոր գործերում, հետեւաբար, պարտականութիւններիդ մինչեւ վերջ հասցնելու համար պարտաւոր ես պահպանել ընդհանուր օրէնքը եւ խուսափել եզակիութիւնից, հետեւելով մեծաւորիդ խորհուրդներին, երբ կասկածներ ունես ու երկմտանքներ, առանց խաբէութեան գործադրելով հնազանդութիւնը խոհեմութեան ու ընտրողութեան չափով:

Եռանդի ամենավերին բարձունքներում շարունակ սաւառնելը մարդկային տկարութեան գործը է, բայց արտաքին իրողութիւններին չափից դուրս տրուելն ու երկրային բարիքների համար մտահոգուելն էլ հոգեւոր յառաջադիմութիւն է, այլ՝ կրօնաւորութեան կորուստ:

Նոյնիսկ եթէ մի ամբողջովին յատուկ շնորհով այցելութիւն ստանաս ու արբենաս Աստծով, յիշիր՝ որ մարդ ես եւ ո՛չ թէ հրեշտակ, որ տակաւին կրում ես մարմնի ծանրութիւնը եւ ո՛չ թէ հոգու պատմութեանը, եւ խոստովանիր ու ընդունիր՝ որ շնորհը քեզ պարգեւուել է, բայց քո հետ չի ծնուել:

Ձգոյշ եղիր, ուրեմն: Մի՛ փափաքիր իմանալ աւելին, քան վայել է իմանալ, այլ աշխատիր միմեանց միաւորել ուրախութիւնն ու երկիւղը, եւ մի՛ ձգտիր հասնելու չափազանց բարձր իրողութիւնների, որպէսզի հոգեւոր ընթացքիդ մէջ չենթարկուես նուաստացումների եւ անձնատուր լինես, ապա, յուսահատութեանը:

Երբ զբաղուած կը լինես արտաքին աշխատանքներով եւ կը զրուցես կարեւոր խնդիրների շուրջ, ամբողջովին մի՛ ընկղմուիր տեսանելի իրողութիւնների մէջ, այլ

ընդհակառակն՝ յաճախակի խորհրդածութիւններով առ Աստուած բարձրացիր: Մտածիր՝ թէ ինչու եւ ում համար են ստեղծուել այդ արտաքին իրողութիւնները: Դրանք պէտք է որ օգնեն Աստծոյ ծառային եւ ո՛չ թէ խանգարեն: Կրօնաւորն, իրօք, պէտք է առաւել դիւրութեամբ ձգտի յաւիտենական անտեսանելի իրողութիւններին, ճիշտ որովհետեւ գիտէ կատարեալ չափաւորութեամբ մօտենալ երկրայիններին:

Գործերում խոհեմութեան առաքինութիւնը եւ հանգստի մէջ իմաստութեան շնորհն ունենալու համար, սակայն, առաւել նպաստաւոր է եռանդով աղօթելն ու Աստծոց խոնարհաբար խնդրելը, քան թէ սեփական ճիգերին ու աշխատանքին վստահելը:

## Գլուխ Ժ.

### ԱՌԱՔԵՐԱՌԹՈՒԹԻԱՆԵՐԻ ԱԷՋ ԼԻՈՒԻ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՊՈԹԵՐ

Տէր, Հայր սրբազնագոյն, որ ամէն բան ստեղծեցիր թուով, կշիռով ու չափով, եւ կամենում ես, որ բանական բոլոր արարածներն իրենց ազատ կամքով հպատակուեն Քեզ, ինչպէս որ պարտաւոր են, եւ որ ծառաներիդ մէջ յատկապէս սիրում ու փնտրում ես սրտաբուխ ծառայութիւնը. խնդրում եմ Քեզ ղեկավարել իմ կամաւոր գործերն ըստ Քո կամքի հաճութեան եւ յաւիտենական վճիռներիդ ենթարկել մարմնիս ապստամբ մղումները, ինձ պարզեւելով կամքիցս լիովին հրաժարուելու շնորհը:

Կարգուկանոն հաստատիր փափաքներիս մէջ, այնպէս՝ որ սկզբից եւեթ մերժեմ չարերը եւ քաջութեամբ պահպանեմ բարիները, սիրեմ մաքուրները եւ սովորեմ հայել Քեզ առանց նիւթական պատկերացումների:

Չափաւորիր երկրային արտաքին գործունէութիւնս, որպէսզի ամբողջովին անձնատուր չլինեմ նրան, այլ կարողանամ անձիցս ներս վերադառնալ եւ առանց դժուարութեան բարձրանալ դէպի երկնային իրողութիւնները: Աճեցրու ինձնում յաւիտենականի փափաքը, սուրբ առաքինութիւնների սէրը, երկնայինի համար բերկրանքը, այնպէս՝ որ Դու, Տէր Աստուած իմ, սրանցով մեծագոյն պատիւ ստանաս, իսկ ես՝ հոգեւոր մեծագոյն յառաջադիմութիւն:

Այցելութիւններդ ինձնում թող հպարտութիւն չարթնացնեն եւ թող որ չվրդովի ինձ ունայնամտութեան ժանտախտը: Մի՛ թոյլատրիր, որ սատանայից խաբուեմ, կամ կեղծ քաղցրութիւններով հմայուեմ, կամ անձնական բարեպաշտութիւնների եւ կամ չափազանց գործերի պատճառով հասարակութիւնից դուրս քաշուեմ: Այլ շնորհիր ինձ ամէն բան խոհեմութեամբ անել, ոչինչ չձեռնարկել առանց խորհուրդ հարցնելու, մաքրութեամբ ու պարզութեամբ ընթանալ Քո ներկայութեանդ երկիւղով ու մեծարանքով, առանց մահկանացու իրողութիւնների հանդէպ կրքի կամ չափազանց գորովի:

Տուր ինձ խոնարհ ու հանդարտ հոգի, չլինեմ չափազանց ընկերական, երբեք մոլի խանդաղատանքով չկապուեմ որեւէ արարածի, այլ միմիայն Քեզ վերապահեմ սիրտս, եւ խաղաղուած, այնպէս՝ որ հայեացքս միշտ ծածուկ դէպի երկինք, դէպի Քեզ ուղղած, Աստուած իմ, տեսանելի ոչ մի բանով չտպաւորուեմ, այլ շարունակեմ իսկապէս արհամարհել աշխարհը:

Օգնիր ինձ արտաքին գործերս կատարելու այնպէս, որ դրանք ոչ մի վնաս չհասցնեն ներքին կեանքիս, այլ թող որ փառքիդ համար ձեռնարկուած բոլոր գործերն ու աշխատանքները օգնական լինեն ինձ եւ առաջնորդեն անյապաղ Քեզ նուիրուելու, մեծագոյն ազատութեամբ:

Այն ամէնը, որ կատարում եմ արտաքուստ եւ մտածում ներքուստ, շնորհիր ինձ անել դրանք մաքրութեամբ ու պարզութեամբ ի փառս Քո Անուան եւ ի սէր Քո կամքի: Եւ շնորհիր ինձ անձս ձեռքերիդ մէջ յանձնել եւ վստահութեամբ թողնել բոլոր դէպքերում, լինեն դրանք բնութեանս համար բարենպաստ կամ ընդդիմադիր: Թող որ համբերութեամբ կրեմ ներկայ կեանքի ծանրութիւնը, մինչեւ որ Քեզ հաճոյ կը լինի վերջ դնել երկրային ընթացքիս. պարզելիր ինձ շնորհը, որ այդ պահին Քեզ իմ Արարչիդ հաւատարմօրէն վստահեմ մարմինս ու հոգիս:

Յիշիր ինձ, Աստուած իմ, կեանքիս վախճանին, եւ ողորմութիւնդ շնորհիր ծառայիդ, քանի որ չեմ ապաւինում իմ արժանիքներին, այլ միմիայն Քո զթութեանն ու անսահման ողորմութեանը:

## Գլուխ ԺԱ.

### ԱՍՏՈՅ ԱՒ ԱԵՐՁԱՌՈՐԻ ՍԷՐԸ ԱՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆՈՒՄ

Աստուած հոգու երջանկութիւնն է եւ հոգին չի կարող երջանիկ լինել, ո՛չ էլ իսկապէս իմաստուն, ստեղծուած բարիքների տիրելով, այլ միմիայն Աստծուն ամէն ինչից աւելի սիրելով եւ Աստծուց ստորադաս իրողութիւնները սրտանց արհամարհելով: Սրա համար է Պօղոս Առաքեալն ասում. «Քրիստոսի համեմատութեամբ ամէն բան աղբ եմ համարում»<sup>28</sup>:

Սէրը վեհ եւ Աստծուց ծնուած առաքինութիւն է, որն երկնային եւ աշխարհին օտար է դարձնում այն հոգուն, որն իրենով լի է: Սէրն ատում է կրքերին, զզուում է մեղանշական հաճոյքներից, պայքարում է չարի դէմ եւ ծառայեցնում է բնութիւնը՝ յաղթել կարողանալու համար այն ամէնին՝ ինչն հակառակ է Աստծուն եւ առաքինութիւններին:

Ինչպէս որ միմեանց միջեւ անհաշտելի են ջուրն ու կրակը, այնպէս էլ չեն կարող միասին ապրել Աստուած եւ աշխարհասիրութիւնը: Որքան աւելի է մէկն յաղթում իր անձին եւ ուղղում իր սխալները, այնքան աւելի է նրանում աճում Աստծոյ սէրը եւ նուազում ու հանգչում է մարմնի սէրը:

Ով չարիք է գործում եւ չի զղջում, այլ մնում է անուղղելի, նա դիմադրում է սիրոյն եւ կործանում է խաղաղութեան բարիքը:

Համերաշխութեանն ունակ է միայն նա՝ ով հեռանում է իր չար սովորոյթներից, որոնցով վշտացնում էր Աստծուն եւ իր հետ բնակուողներին: Եթէ կամենում ես ունենալ Աստծոյ սէրը եւ խաղաղութիւն եղբայրներիդ հետ, գիշիր կամքդ, ոչինչ մի՛ արա հպարտութեամբ եւ խոնարհուիր ամէն ինչում:

Ճանապարհը, որն առաջնորդում է դէպի սէրը, այն է՝ որ սկիզբ է առնում խոնարհութիւնից, որովհետեւ ով հպարտ կարծիք ունի իր մասին, շա՛տ ու շա՛տ հեռու է սիրուց:

Շատ անգամներ մարդիկ կարծում են՝ թէ այս կամ այն բանը սէր է, բայց աւելի՛ մարմնապաշտութիւն է: Ցանկասիրութեամբ գինի խմելն ու կանանց հետ խօսակցելը մարմնապաշտութիւն է: Բծախնդրութեամբ ուտելն ու նրբութեամբ զգեստաւորուելը մարմնապաշտութիւն է: Շատ խօսելն ու քիչ աշխատելը մարմնապաշտութիւն է: Գրեթէ երբեք չաղօթելը եւ յաճախակի այս ու այն կողմ թափառելը մարմնապաշտութիւն է: Ճաշի ժամին միշտ ճշտապահ լինելը եւ աղօթքի ժամին միշտ ուշանալը մարմնապաշտութիւն է:

Իրական սէր ունի նա՝ ով արմատապէս ատում է աշխարհի ունայնութիւնները եւ զզուշանում է մարմնի համաձայն վարուելու վտանգից: Յիրաւի, սուրբ սէրը մարդկանց մէջ երկրային մխիթարութիւններ չի փնտռում, այլ՝ հոգեւոր յառաջադիմութիւն:

Սէրը մտածում է, որ մարդը ստեղծուած է Աստծոյ պատկերով, եւ մարմնի կրքերը մերժում է որպէս վնասակար բաներ, որովհետեւ մղում են դէպի չարը:

Չի կարելի ասել՝ թէ սէր կայ այնտեղ՝ ուր բացակայում են արդարութիւնն ու կանոնապահութիւնը:

Ով իսկապէս սիրում է Աստծուն եւ մարդկանց, չպէտք է թաքցնի այն՝ ինչը որ վշտացնում է Աստծուն եւ վնասում է հոգիներին: Խաղաղութիւնը լաւ է առաքինութիւնների հետ, բայց միշտ չարիք է մոլորութիւնների ընկերակցութեամբ:

Կարգուկանոնն ու խաղաղութիւնն են թագաւորում այն տանը, ուր ուղղում են թերութիւնները եւ պատրաստակամօրէն արմատախիլ են արւում կրքերը:

<sup>28</sup> Փլպ 3, 8

## Գլուխ ԺԲ.

### ՊԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՈՂՋԱԽՈՀՈՒԹՅԱՆ

Չափաւոր կերակուրներն ու ըմպելիները առողջութիւնն են հոգու եւ մարմնի: Սակաւութիւնը սովորեցնում է սիրել աղքատութիւնը:

Զսպուածութիւնը, երբ մէկը շրջապատուած է հաճոյքներով, շատ հազուադէպ առաքինութիւն է: Ժամանակաւոր բարիքների առատութիւնն առիթ է անկարգութեան եւ բոլոր մեղքերի մայրն է:

Մէրն առաւել ապահով է աղքատութեան՝ քան հարստութիւնների մէջ: Մարմնական բարիքների սակաւութիւնը դեղորայք է հաւատացեալ հոգու համար:

Սրտի վիշտը ցրուածութեան առաջն է առնում, իսկ Աստծոյ երկիւղը փակում է հպարտ աչքերը: Ինչպէս որ վնասակար է անմաքուր կեանքը, նոյնքան վնասակար է անվայել գրոյցներ լսելը: Սրբակեաց հոգին միշտ պէտք է խոստափի մարմինների չափազանց մօտիկութիւնից, որովհետեւ մարմինը շուտով է տպաւորում միւս մարմին: Սիրել գեղեցիկը եւ ծարաւով փնտռել նրբին քաղցրութիւններ. սրանք նպաստաւոր չեն ողջախոհութեան առաքինութեանը: Ընդհակառակն, ով ընտրում է համեստ իրականութիւնները եւ սիրում է դրանք ի սէր ողջախոհութեան, կարող է հեշտօրէն յաղթել մարմնին, որովհետեւ որքան աւելի է մահացւում մարմինը, այնքան աւելի է բարձրանում հոգին:

Ով հեռու է մնում մարմնի օրեւէ հպումից, իր հոգում կը զգայ ողջախոհութեան քաղցրութիւնը:

Ով սիրում է մենութիւնը, առաւելագոյն չափով մաքուր կը մնայ աշխարհային արատներից:

Ով հաւատում է, որ իր անկեալ մարմինը բանտ է հոգու համար, շատ չի մտահոգուի այն գարդարելու եւ ցուցադրելու, մտաբերելով՝ որ շուտով կրկին հող ու նեխած գարշանք է դառնալու: Մարդու արտաքինը գնահատելը եւ սեփական գեղեցկութեամբ եւ ուժով պարծենալը ունայնութիւն է ու մոլութիւն:

Սրբերը մարմնական պահեցողութեան ու կանոնապահութեան մէջ ապրեցին եւ ներկայ վշտակրութեան փոխարէն ստացան Սուրբ Հոգու մխիթարութիւնը: Աստուծոյ մխիթարուելու արժանի չէ նա՝ ով մահկանացու բարիքներ է փնտռում ու վայելում եւ տրտմում է դրանց սակաւութեան համար:

Ով Քրիստոսի ծառայութեան մէջ համբերութեամբ կրում է վիշտ եւ յոգնութիւն, մեծ փոխհատուցում է ստանալու, որքան էլ որ փոքր լինի իր կատարածը:

Ողջախոհութիւնը բազմաթիւ թշնամիներ ունի. բայց նրանք՝ ովքեր անկեղծօրէն խոնարհւում են, պատրաստակամօրէն հայցում են Աստծոյ օգնութիւնը եւ ջանասիրութեամբ պահպանում են իրենց զգայարանները, յաղթանակ են տօնում, Քրիստոսին հետեւելով որպէս իրենց Առաջնորդին:

## Գլուխ ԺԳ.

### ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆՔԱՆՈՒ ԾՈՒՋ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԱՍԱԻՆ

Առաջին կրթութիւնն ու ամենաքաղցր մխիթարութիւնը, որն հնարաւոր է ճաշակել այս կեանքում, մեր Տէր Յիսուս Քրիստոսի կեանքն ու չարչարանքներն են: Քրիստոսն իր ե՛լ գործունեայ ե՛լ հայեցողական կեանքով, ամենակատարեալ կերպով եւ առանց սխալների ու բազում պատճառաբանութիւնների, մարդկանց ուսուցանում է այն՝ ինչը որ շատ հազուադէպ կարելի է գտնել միւս գիտութիւններում: Այս իսկ պատճառով,

կատարելութեանն ու մտքի լուսաւորութեանը, ինչպէս նաեւ յաւիտենական կեանքին հասնելու համար ամենաապահով ուղին Աստծոյ Որդուն նմանուելն է իր բոլոր առաքինութիւններին ու սովորոյթներին մէջ:

Սովորիր, ուրեմն, դէպի Նրա սէրն ու պատիւն ուղղել քո բոլոր գործերն ու զգացումները, եւ Նրան ներկայ նկատել ամէնուր եւ ամէն ժամ: Մեծ յարգանքով ու բարեպաշտութեամբ խոնարհեցրու գլուխդ ամէն անգամ, երբ լսում կամ ինքդ արտասանում ես Նրա Սուրբ Անունը: Ծունկի եկ եւ բոլոր Հրեշտակների, Հրեշտակապետների ու Սրբերի հետ երկրպագիր, օրհնիր ու գովերգիր Նրա վսեմութիւնն ու աստուածութիւնը:

Այն, որ Յիսուս Քրիստոս բնակուի քո սրտում շնորհիւ հաւատքի ու սիրոյ, սա է նշանակում. մտքիդ աչքերի առջեւից երբեք չհեռացնել Նրա պատկերը, մշտապէս ջանալ կատարել Նրա կամքը եւ ոչինչ չգերադասել Նրա սիրոյն: Այն ամբողջ բարին, որի մասին լսում ես, որը դու ինքդ գործում ես կամ ասում, ուղղիր միմիայն իրեն, որովհետեւ ինքն է կեանքի, իմաստութեան ու կանոնապահութեան աղբիւրը: Ապարդիւն չի անցնի եւ ո՛չ իսկ ամենափոքրիկ մտածումը, որով յիշուել է ինքը, եւ ունայն ու անպտուղ չի լինի իրեն ուղղուած աղօթքներից ոչ մէկը:

Նմանուիր, ուրեմն, Յիսուսի սրբազնագոյն կեանքին, այս աշխարհում հետեւելով, ուժերիդ ներածի չափով, Նրա աղքատութեանը, խոնարհութեանը, Նրա համբերութեանն ու աշխարհի հանդէպ արհամարհանքին: Խորհիր, թէ ինչպէս քո համար աշխատեց իր սուրբ ծնունդից սկսած մինչեւ իր մահը Խաչի վրայ, ինչպէս տառապեց քո համար եւ քեզ տրամադրեց իր ժամանակը, մի բան՝ որ չի արել ոչ մի Հրեշտակ եւ ոչ մի Սուրբ: Իրաւացիորէն, ուրեմն, Նա քո կողմից պէտք է սիրուի ամէն ինչից աւելի եւ անդադար կերպով:

Պօղոս Առաքեալն ամէն ինչից, որեւէ իմաստութիւնից ու բոլոր գիտութիւններից աւելի բարձր էր դասում Յիսուս Քրիստոսի եւ խաչուած Յիսուս Քրիստոսի մասին մտածելը: Եւ, թէեւ բազում բաներ էր ընթերցել ու սովորել, դրանք երբեք աւելի բարձրակարգ չհամարեց՝ քան Քրիստոսի չարչարանքներն ու սէրը, որոնք այնքան վիթխարի են, որ արարածներից ոչ մէկը չի կարող պատշաճ չափով երախտագիտութիւն յայտնել Աստծուն դրանց նոյնիսկ ամենափոքրիկ մասնիկի համար:

Այս իսկ պատճառով, աշխարհին «մնաս բարով» ասելուց եւ մարմնի կրքերը սանձահարելուց յետոյ եւս նա, Աստծով լի, տակաւին ասում էր. «Իմ համար կեանքը Քրիստոսն է, իսկ մահը՝ շահ»<sup>29</sup>: Ո՛վ քաղցրիկ ու հոգեւփոփ խօսք, որն երբեք չպէտք է մոռանալ: Որքա՛ն երջանիկ եւ սուրբ է այն հոգին, որը կարող է այսպէս արտայայտուել, այն հոգին, որի համար Քրիստոսն այն ամէնն է՝ ինչով ինքն ապրում է, այն ամէնը՝ որ գիտէ, այն ամէնը՝ որ կատարում է, այն ամէնը՝ որ ըմբռնում է, այն ամէնը՝ որին հաւատում է, այն ամէնը՝ որի յոյսն ունի, այն ամէնը՝ որ սիրում է, այն ամէնը՝ որ մտածում է, այն ամէնը՝ որ խօսում է եւ այն ամբողջ բարիքը՝ որ գործադրում է:

Իսկապէս երջանիկ է ապրում նա՝ ում համար Յիսուս Քրիստոսն ամէն ինչ է ամէն ինչում եւ սիրուած է ամէն ինչից վեր. նա՝ ով մնում է Յիսուս Քրիստոսի մէջ աւելի՝ քան ինքն իր մէջ, արհամարհում է իր անձը եւ քաղցրօրէն ու բերկրանքով հանգստանում է Քրիստոսի մէջ: Այսպէս ապրել՝ նշանակում է ապրել Քրիստոսի համար եւ մեռնել ինքներս մեզ, եւ հետեւաբար՝ կորցնել ու շահել հնարաւորինս ամենամեծ չափով, որովհետեւ նշանակում է կորցնել յաւիտենական մահը եւ շահել յաւիտենական կեանքը Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ մէջ:

Այսպիսի տրամադրութիւններով լի հոգին, թէպէտեւ տակաւին ապրի այս աշխարհում, մարմնի մշուշով շրջապատուած եւ բազում նեղութիւններով ճնշուած, մտքով բնակուած է վերեւում, երկնքում, ուր Քրիստոս համբարձաւ եւ բազմեց Հօր աջ կողմում: Դէպի Նա է ուղղում իր հառաչանքներն ամէն օր, դէպի Նա է ձգտում կարօտով, եւ չի դադարում աղօթելուց, մինչեւ որ Նրա հետ կը լինի եւ կը վայելի Նրա անմիջական ներկայութիւնը:

<sup>29</sup> Փլպ 1, 21

ՄՈՐԲ ԿՈՅՄ ՄԱՐԻԱՄԻ ԲԱՐԵՒՍՈՒԹԻՒՆ

Միշտ եւ ամէնուր պատշաճ է մտաբերել փառահեղ Կոյս Մարիամի, Յիսուսի օրհնեալ Մօր յիշատակը: Իր արժանիքներին ու աղօթքներին պէտք է վստահես անձդ եւ բոլոր կարօտութիւններիդ մէջ նրան դիմես, ինչպէս իր սիրելի մօրն է դիմում վէրքերով պատուած որդին: Մարիամի քաղցրիկ անունը վստահութիւն է ներշնչում նրանց՝ ովքեր աղօթքով դիմում են նրան: Եւ նա միշտ տրամադիր է իր Որդու առաջ բարեխօսելու վշտացած խեղճ հոգիներին ի նպաստ:

Եթէ Մարիամը բոլոր Սրբերի հետ երկնքում ամէն օր չաղօթէր աշխարհի համար, ինչպէ՞ս դեռ կը կարողանային կենդանի մնալ մարդիկ, որոնք վշտացնում են Աստծուն այսքա՛ն ծանր ու բազմաթիւ մեղքերով, առանց զղջալու ու ապաշխարելու:

Մարիամին, հետեւաբար, պէտք է դիմեն բոլոր քրիստոնեաները. արդարներն ու մեղաւորները, բայց յատկապէս՝ կրօնաւորներն ու նուիրեալ անձինք, որոնք Աստծոյ առաջ կուսակրօնութիւն են ուխտել եւ որոնք, սուրբ փափաքների միջոցով, կամենում են հասնել երկնային իրողութիւններին, չեն ուզում ունենալ երկրայինները եւ ո՛չ էլ ցանկանում են որեւէ կապ ունենալ աշխարհի հետ:

Բայց ի՞նչ է հարկաւոր խնդրել նրանից: Նախեւառաջ խնդրիր թողութիւն մեղքերիդ, ապա զսպուածութեան առաքինութիւնն ու խոնարհութիւնը, որն Աստծուն շատ հաճելի առաքինութիւն է: Այսպէս վարուելով, միշտ խոնարհ կը ներկայանաս Աստծուն, կը փափաքես համարուել անարժէք ոչնչութիւն եւ մի խեղճ թշուառ, գործադրածդ ոչ մի բարիքով չես պարծենայ եւ, հետեւաբար, չես կորցնի այն ամէնը, որը կարծում ես՝ թէ ունես: Ամօթով խոստովանիր, որ այնքա՛ն հեռու ես իրական առաքինութիւններից, խորին խոնարհութիւնից, սուրբ աղքատութիւնից, կատարեալ հնազանդութիւնից, մաքրագոյն ողջախոհութիւնից եւ եռանդուն սիրուց: Սրանք բոլորն էլ առաքինութիւններ են, որոնք իրենց ամենալիուլի աստիճանով փայլեցին Մարիամի, Աստծոյ Մօր անձում:

Իր ոտքերի առջեւ նետուիր, ուրեմն, աղքատիկ մուրացկանի նման, ձեռքբերելու համար այս առաքինութիւնները գէթ նուազագոյն չափով, եթէ ծուլութեանդ պատճառով չես կարողանում բարձրանալ մինչեւ ամենավերասույց գագաթները: Ինչ էլ որ փափաքես, խոնարհաբար խնդրիր Սուրբ Կոյս Մարիամից, որովհետեւ իր արժանիքները մեծագոյն օգնութիւն են նրանց համար, ովքեր գտնուում են քաւարանում եւ երկրի վրայ:

Յանձինս Յիսուսի, իր Փրկչի, նա ունեցաւ մի շնորհ եւ երկնքում փառաւորուած է աւելի՛ քան միւս բոլոր Սրբերը: Եւ այս ամէնը մեր համար է, որ դեռ ապրում ենք այս աշխարհում:

Հետեւաբար, ապահովութեամբ վստահիր անձդ նրա հաւատարմութեանը, որի աղօթքներն ընդունելի են Աստծոյ առաջ, բայց միայն այնպիսի բաներ խնդրիր, որոնք հաճելի են իրեն եւ իր սիրելի Որդուն եւ օգտակար են փրկութեանդ: Իսկ այդ բաները նրանք քեզնից աւելի լաւ գիտեն:

Աղօթել մեղաւորների համար եւ պահպանել սրտի խոնարհութիւնը. սա բաւականին հաճելի է Աստծուն եւ Սուրբ Կոյսին: Նա Աստծոյ առաջ միմիայն իր խոնարհութեան մասին խօսեց, իսկ մնացածի մասին լռեց: Որքան էլ որ մեծ էր իր ստացած շնորհը, նա երբեք չխախտեց խոնարհութեան սահմանները: Թող որ, հետեւաբար, Սուրբ Կոյս Մարիամը հեզութեամբ բարեխօսի մեր համար, որպէսզի արժանանանք Աստծոյ շնորհին:

## Գլուխ ԺԵ.

### ՍՐԵԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՄԱՆԱ, ՈՐՆ ՀԱՐԿԱԿՈՐ Է ՀԱՅԺԵԼ ԵՎ ԵՐԿՐԱԿԱՆ ԴՆԵՐՆԵՐԻ

Չպէտք է մոռանաւ տեւապէս խնդրել Քրիստոսի հետ թագաւորող Սրբերի օգնութիւնը նոյնպէս, քանի որ, ինչպէս տեսնում ես, ապրում ես արցունքների մի հովտում, ամէն օր շրջապատուած ես թշնամիներով եւ դեռեւս Աստուծոյ հեռու գտնուող պանդուխտ ես:

Հոգատար եղիր, ուրեմն, պանդխտութեանդ ընթացքում բարեկամութիւն հաստատելու Սրբերի հետ, որոնք Աստուծոյ մտերիմներն են, իւրապատուկ ընտանութիւն ունենալու նրանց հետ եւ անձդ հեռու պահելու մարդկային ծանօթութիւններից ու դատարկ խօսակցութիւններից:

Քո համար աւելի կարեւոր է միայն մի Սրբի բարեխօս աղօթքը, քան թէ այցելութիւնը այս աշխարհի բոլոր ընկերներիդ:

Քեզ աւելի կը մխիթարի Յիսուս Քրիստոսը լռութեան մէջ, քան թէ ճոխ ճակերոյթներում մարդկանց երկարատեւ շատախօսութիւնն ու ծիծաղը:

Արդարը մի ներքին բերկրանք է վայելում, որին անընդունակ է կենդանական մարդը, որն անյագ տեսնում է երկրային իրողութիւններ ունենալու: Եթէ սիրում ես աղքատութիւնն ու պարզութիւնը, քեզ շատ յաճախ կը գտնես Յիսուսի ու Իր սուրբ Հրեշտակների ընկերութեան մէջ: Իսկ եթէ չմխիթարեն քեզ տեսանելիօրէն, դա առնուազն անտեսանելի ու ծածուկ կերպով կ'անեն, Աստուծաձաշնչի միջոցով:

Երանելի է նա՝ ով իր մխիթարութիւնները մարդկանց մէջ չի փնտռում, այլ՝ Աստուծաձաշնչում եւ բարեպաշտ աղօթքներում, ստանալու համար իսկապէս ապրելու եւ վերին իրականութիւնները սիրելու շնորհը, ինչպէս վարում էին Սրբերը, աշխարհն արհամարհելով:

Իւրաքանչիւր ոք սիրում է իրեն նմաններին. բարեպաշտը փնտռում է բարեպաշտին, ողջախոհը՝ ողջախոհին, սուրբը՝ սրբին, անմիտը՝ անմիտին եւ անառակն՝ անառակին: Այս իսկ պատճառով, եթէ կամենում ես Սրբերի հետ երկնքում թագաւորել, պարտաւոր ես Սրբերի հետ տառապել Աստուծոյ սիրոյ համար եւ նուաստանալ այս աշխարհում, որովհետեւ այնքան էլ արդիւնալի չէ Սրբերին շրթունքներով մեծարելը եւ միաժամանակ գործերով անպատուելը:

Եթէ կամենում ես Աստուծուն եւ Սրբերին հաճելի լինել, հպատակեցրու մարմինդ, ուրացիր կամքդ, պայքարիր կրքերիդ դէմ, աշխատիր առաքինութիւններ ձեռքբերելու գործում, փափաքիր ծանօթ լինել Սրբերի կեանքին, ընթերցիր նրանց ուսուցումները, որպէսզի լինես սուրբ Սրբերի հետ, Սրբերից կրթուած, Սրբերից օգնութիւն ստացած, Սրբերից ընդունուած եւ Սրբերի հետ թագաւորուած:

Սրբերին հաճելի է դէպի երկինք բարձրացող տեւական հառաչանքը, վիշտը՝ մեղքերի պատճառով, բերանի լռութիւնը, ուղղուելու հաստատուն որոշումը, յառաջադիմելու փափաքը, նեղութիւնների մէջ համբերութիւնը եւ երախտագիտութիւնը ստացած բարիքների համար:

Սրբերին հաճելի է նաեւ բարեպաշտ երգեցողութիւնը, հսկելու պատրաստակամութիւնը, սաղմոսերգութիւնը, մեղքերի խոստովանութիւնը, ներում հայցելը, Սուրբ Պատարագի մատուցումը, աղօթքների ժամանակ հեղուած անկեղծ արցունքները եւ կանոնապահութեան բոլոր գործերը:

Ով անձնատուր է լինում թմրութեանը եւ լքում է այս բարիքները, կորցնում է բարեպաշտութեան շնորհը, հաճելի չի լինում Աստուծուն եւ ո՛չ էլ սիրելի՝ Հրեշտակներին, այլ հակառակ է Աստուծուն եւ բոլոր Սրբերին: Յիրաւի, ով պատկանում է Աստուծուն, ունկնդրում է Աստուծոյ խօսքը, յօժարութեամբ ընթերցում եւ գրում է Աստուծոյ խօսքերը, հսկում ու աղօթում է բաւական եւ բաւական գործադրում է զսպուածութիւնը, աշխատում է, լռում, նուիրում է Աստուծոյ ծառայութեանը: Յօժարութեամբ մնում է խուցի ներսում եւ եկեղեցիում, օգնութեան է կանչում այս կամ այն Սրբին եւ ծնրադիր խնդրում է իր

կրքերին յաղթելու, փորձութիւններին դիմադրելու շնորհը: Զերմեռանդ աղօթքներով միշտ վառ է պահում բարեպաշտութիւնը, եւ այս կեանքի մայրամուտից յետոյ հասնելու է յաւիտենական հանգստի բնակավայր, ուր բոլոր Սրբերն երջանիկ թագաւորում են Քրիստոսի հետ:

Վստահ եղիր, որ ունայն չի լինի աղօթքներիցդ ոչ մէկը, որն ուղղում ես Սրբերին բարեպաշտ դիտաւորութեամբ եւ նրանց մեծարելու նպատակով: Նրանք, որ այնքան հոգատարութեամբ աղօթում էին իրենց թշնամիների համար, մինչ նեղութիւնների էին ենթարկուում նրանց կողմից, որքան աւելի հոգատարութեամբ այժմ կ'աղօթեն իրենց ջերմեռանդների համար, որպէսզի նրանք նոյնպէս շուտով իրենց միանան երկնային ուրախութիւններում, որովհետեւ ամէն օր աշխատում են Աստծոյ ծառայութեան մէջ, բազում հառաչանքներով ու արցունքներով աղօթելով Քրիստոսին, ստանալու համար յաւիտենական կեանքը:

Սրբերին ուղղուած աղօթքը ներշնչում է մեծ վստահութիւն, որովհետեւ նրանք էլ մի ժամանակ մահկանացու մարդիկ էին եւ զանազան կրքերի կողմից ճնշուած ու բռնադատուած մեղաւորներ: Աստծոյ գթութեամբ ու ողորմութեամբ ազատագրուած ու արդարացուած լինելով, նրանք ամբողջ սրտով երախտագիտութիւն են յայտնում Քրիստոսին այն բոլոր չարիքների համար, որոնց կարողացան յաղթահարել, երջանիկ լինելով յաւիտենական երանութեան մէջ, որին արժանացան աստուածային շնորհի օգնութեամբ:

## ԳՊՈՒՆ ԺԶ.

### ԵՐԱՆԱՅԻՆ ԱՐՔԱՅԻՆԹԵԱՆ ՓԱՓԱՔԸ

Այս կեանքում Սրբերի միակ փափաքն այս աշխարհին կապուած ոչ մի գործ չունենալն էր, այլ ձգտելը միշտ հասնելու Քրիստոսի ներկայութեանն ու երկնաբնակիների ընկերութեանը, արհամարհելով երկրային բոլոր իրողութիւնները:

Այս իսկ պատճառով, Պօղոս Առաքեալը նոյնպէս, որը խորը կերպով սիրում էր Քրիստոսին եւ կատարեալ կերպով արհամարհում էր երկրային բոլոր իրողութիւնները, հոգեպէս մաշուած էր երկնայինների փափաքով եւ ասում էր. «Ուզում եմ մեռնել, Քրիստոսի հետ լինելու համար»<sup>30</sup>: Սա ամէն մարդու փափաք է, այլ միայն կատարեալների, որոնք կարող են ասել. «Երկնաքաղաքացիներ ենք»<sup>31</sup>: Իրօք որ սակաւաթիւ են նրանք՝ ովքեր իրենց ամբողջ սէրն ու գործին ուղղում են դէպի յաւիտենականութիւնը, չցանկանալով հարստութիւններ եւ երկրային փառքեր:

Նրանք՝ ովքեր Աստծոյ սիրով բոցավառուած, վայելք են սեպում աղքատութիւնն ու ինքնամերժումը. ովքեր հակում են դէպի խոնարհութիւնը եւ իրենք իրենց յանդիմանում են նաեւ փոքրիկ թերացումների համար. ովքեր կեանքի համար հարկաւոր բաներն ընդունում են չափաւորութեամբ ու երկիւղով, նախընտրելով չափազանց քիչ ունենալ՝ քան թէ չափազանց. այսպիսիք իսկապէս արհամարհում են աշխարհը եւ իսկապէս մտերիմ են Աստծուն, սրբնթաց սլանում են դէպի Հայրենիք, միշտ պատրաստ՝ դուրս գալու մարմնից եւ շուտով հասնելու Քրիստոսին, քանի որ չունեն ոչինչ, որը կարող լինի վայելքով պահել նրանց այս աշխարհում:

Երանի՛ այն հոգուն, որն այսօրինակ փափաքներ ունի եւ օրէցօր աւելացնում է եռանդ եռանդի վրայ, երբեք չդադարելով աղօթելուց ու աղաղակելուց առ Քրիստոս, մինչեւ որ իր առջեւ կը բացուի երկնքի դուռը եւ ինքը նոյնպէս կը կարողանայ մուտք գործել Աստծոյ Արքայութիւն, որը խոստացուած է բոլոր հաւատարիմներին:

Ա՛հ, երանաւէտ Հայրենիք, ուր իշխում են մշտատեւ զուարթութիւնը, գերագոյն խաղաղութիւնը, Աստծոյ ուղղակի ճանաչումը, կատարեալ սէրն ու անքանակ

<sup>30</sup> Փլպ 1, 23

<sup>31</sup> Փլպ 3, 20

երջանկութիւնը: Լաւ է մէկ օրն այնտեղ՝ վերեւում, քան թէ բիւրաւոր օրերն այստեղ՝ ներքեւում, որովհետեւ այնտեղ չկայ ոչ մի խեղճութիւն, մինչ այստեղ կայ շա՛տ խեղճութիւն, հագուադէպ անդորր եւ սահմանափակ ճանաչողութիւն:

Ի՞նչ կարող են ասել թշուառները յաւիտենական երանութեան մասին: Ի՞նչ կարող են հասկանալ մահկանացուներն իրական յաւիտենականութեան եւ մշտատեւ կեանքի մասին: Խաւար ու մշուշոտ կերպով են միայն կարողանում տեսնել այն, Աստուածաշնչի քօղի ետեւում:

Թող որ հառաչի ու ողբայ, ուրեմն, հաւատացեալ հոգին, որ շրջապատուած է աշխարհի ստուերներով, հառաչելով ու փափաքելով երկնային Հայրենիքի ընկերութիւնը եւ մտքի աչքերն անդադար բարձրացնելով դէպի վեր, ուր Քրիստոսն ապրում է Հօր փառքի մէջ, թագաւորելով յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

